

Խ. Գյուլնազարյան

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ
ԵՎ ՆԱԽԱՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՄԱՍՈՒԼԸ

Լենինյան իսկրայական ուղղության առաջին հայերեն թերթը Ստ. Շահումյանի և Բ. Կնունյանցի նախաձեռնությամբ կազմակերպված «Հայ սոցիալ-դեմոկրատների Միության» օրգան «Պրոլետարիատ» էր, որը լույս է տեսել 1902 թվականի հոկտեմբերին:

Մինչ «Պրոլետարիատի» երևան գալը, հայ իսկրայականները գրավոր խոսքի միջոցով մղվող պայքարը վարում էին բացառապես ռևոլյուցիոն կոչերով ու թռուցիկներով: Դրանցով նրանք պայքարի կոչ էին անում հայ աշխատավորներին, մերկացնում էին ցարական ինքնակալությանն ու բուրժուազիային, մասսաների համար մատչելի լեզվով լուսաբանում տնտեսական-քաղաքական պայքարի առանձին մոմենտները: Թռուցիկները տպագրվում և տարածվում էին առավելապես քաղաքական կարևոր անցուղարձերի և մայիսմեկյան մանիֆեստացիաների կապակցությամբ և ունեին բացառիկ պրակտիկ նշանակություն, որպիսին նրանք չեն գազարում ունենալ հայ լեզու և անլեզու բոլշևիկյան պարբերականների երևան գալուց հետո էլ: Սակայն, հասկանալի է, որ քաղաքական անցուղարձերի կապակցությամբ ստեպ-ստեպ հրատարակվող այդ կոչերն ու թռուցիկները չէին կարող այնպիսի դեր կատարել, ինչպիսին կատարում է կոլեկտիվ կազմակերպիչ, կոլեկտիվ ագիտատոր և կոլեկտիվ պրոպագանդիստ թերթը: Այս տեսակետից հայ ռևոլյուցիոն մտքի զարգացման պատմության մեջ կարևոր իրադարձություն էր «Պրոլետարիատ» անլեզու թերթի երևան գալը:

Վ. Ի. Լենինը բարձր է գնահատել Ստ. Շահումյանի գլխավորած «Հայ սոցիալ-դեմոկրատների Միության» և նրա մարտական օրգան «Պրոլետարիատի» աշխատանքը: Արտասահմանում ծանոթանալով թերթի առաջին համարին, Վ. Ի. Լենինը հատուկ հոգված է գետեղել «Իսկրայի» 1903 թվականի 33-րդ համարում, ուր, ողջունելով Միության նախաձեռնությունը, շեշտում է այն ճիշտ դիրքորոշումը, որ Միությունն ու նրա օրգանը բռնել են ազգային հարցի կապակցությամբ:

«Հայ սոցիալ-դեմոկրատների Միությունը», որ ձևավորվել էր 1902 թվականի ամռանը և գործում էր ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեի հետ սերտորեն կապված, մի քանի ամսից հետո կազմակերպորեն ձուլվում է Կոմիտեին, իսկ 1903 թվականի մարտին տեղի ունեցած կովկասյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջին համագումարի որոշմամբ ի մի են ձուլվում նաև հայկական «Պրոլետարիատ» և վրացական «Բրձոլա» թերթերը և լույս է տեսնում ՌՍԴԲՊ Կովկասյան Միության օրգան «Պրոլետարիատի կոիվը» նախ վրացերեն ու հայերեն, իսկ 1905 թվականից՝ նաև ռուսերեն¹:

¹ Այս մասին մանրամասն տես Վ. Լենինի «Նախագիծ ծրագրի Կովկասյան սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունների միության», 1903, ժնև:

Այլ հոգվածների շարքում՝ լենինյան իսկրայական ուղղության հայերեն առաջին թերթերը՝ «Պրոլետարիատն» ու «Պրոլետարիատի կռիվը» պարբերաբար տպագրում են ներքին տեսություններ և հաղորդումներ Անդրկովկասում և Ռուսաստանում ծավալվող ռևոլյուցիոն շարժման մասին: Դրանց մեջ հետաքրքիր տեղեկություններ կան բանվորական ցույցերի, գործադուլների, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների աշխատանքի վերաբերյալ:

Այդ տեղեկություններն ավելի կարևոր են Անդրկովկասի բուլժևիկների պայքարի պատմության հարցերով զբաղվող պատմաբանի համար, սակայն դրանց մեջ քիչ չեն նաև այնպիսի փաստեր, որոնք որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նախառևոլյուցիոն շրջանի հայ բուլժևիկյան գրականության մի քանի հարցերի մեկնաբանման տեսակետից: Այսպես, օրինակ, «Պրոլետարիատում» «Ներքին տեսություն» վերնագրով տպագրված մի հոգվածում, խոսելով հոգևորականության ժողովրդի մեջ ունեցած վարկի մասին, թերթը բերում է Տոլստոյին որպես աղանդավոր եկեղեցուց անջատելու դեպքի կապակցությամբ ժողովրդի բռնած հակակղերական դիրքը և բարձր գնահատում հանձարեղ գրողին: «Հոգևորականությունը մի մեծ վարկ չունի ժողովրդի մեջ,— գրում է թերթը,— այդ հանգամանքը փայլուն կերպով արտահայտվեց մեծ վիպասան Տոլստոյին եկեղեցուց անջատելու օրերում, երբ ռուսաց ժողովուրդը, ինչպես մի մարդ, Տոլստոյի կողմը բռնեց և նախատեց հոգևորականության այդ վարմունքը»¹:

Ինչպես տեսնում ենք, պատմական փաստը գնահատելիս, հայ մարքսիստները ելնում են մեթոդոլոգիական ճիշտ դիրքերից՝ դրողի հասարակական նշանակության մեջ ընդգծելով նրա արվեստի օբյեկտիվ ճշմարտացիությունը, նրա ռեալիստական ստեղծագործության ներգործոն ուժը՝ անկախ նրա քաղաքական համոզմունքներից:

«Պրոլետարիատի կռիվը» թերթի 2—3 միացյալ համարում տպագրված է «Նամակ Թիֆլիսից» վերնագրով մի թղթակցություն, որը փաստորեն ինֆորմացիոն հաղորդագրություն է Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների աշխատանքի մասին 1903 թվականի հունվարից մինչև մայիս: Այս թղթակցության մեջ մեզ հետաքրքրող հարցի տեսակետից կա երկու ուշագրավ մոմենտ: Նախ՝ այստեղ խոսվում է այն դերի մասին, որ փողոցային ցույցերի ժամանակ կատարել են ռևոլյուցիոն երգերը՝ «Մարսելյոզը», «Ինտերնացիոնալը», «Վարչավյանկան» և այլն, շեշտվում է մարտական-ռևոլյուցիոն երգերի դաստիարակչական խոշոր նշանակությունը, նրանց մոբիլիզացնող ուժը: Վերոհիշյալ երգերին տրվում է նույն գնահատականը, ինչ որ Ի. Վ. Ստալինը տվել էր երկու տարի առաջ «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական պարտիան և նրա մերձավորագույն խնդիրները» հոգվածում, որ տպագրվել է «Բրժուլա» թերթի 1901 թվականի 2—3 միացյալ համարում:

Երկրորդ փաստը վերաբերում է Ա. Ս. Պուշկինի հայտնի «Ազատություն» բանաստեղծությանը, որի հատվածը Հ. Թումանյանի թարգմանությամբ տպագրվել է բուլժևիկյան թռուցիկների վրա և տարածվել մասսաների մեջ:

Հայտնի է, որ այդ փաստի մասին կան միայն ժամանակակիցների հիշողությունները: Վերոհիշյալ հոգվածում խոսվում է կոնկրետ այն ազդեցության մասին, որ թողել է Պուշկինի քառատողը մասսաների վրա:

¹ «Պրոլետարիատ», 1902, № 1, էջ 20:

«Մանիֆեստացիայի (խոսքը մայիսմեկյան ցույցի մասին է — իս. ռ.) նախ-
ընթաց երեկոյան, — կարդում ենք հոդվածում, — տարածվեցին կարմիր թեր-
թիկներ Պուշկինի շորս տող ոտանավորով — սա արդեն մեծ սենսացիա առաջ
բերեց, նույնիսկ թատրոնների գալերեաներից սկսեցին լսվել «Կորչի՛ ինքնա-
կալությունը, կեցցե՛ն թերթիկները»¹։

Հասկանալի է, ցարական ոստիկանության երրորդ բաժանմունքի անընդ-
հատ հալածանքների պայմաններում հրատարակվող անլեզալ թերթը, որն իր
առաջ բազմաթիվ անհետաձգելի խնդիրներ ուներ, չէր կարող իր էջերը լայ-
նորեն տրամադրել գրականության հարցերին։ Սակայն, նման փաստերը, ինչ-
պես նաև այն հանգամանքը, որ առաջին հայ բուլղարական անլեզալ պարբե-
րականներում արդեն տպագրվում էին ռեուլյուցիոն բանաստեղծություններ, գե-
ղարվեստական նյութեր, խոսում է այն մասին, որ Ստ. Շահումյանի շուրջը
համախմբված հայ մարքսիստները դեռևս այն ժամանակ շատ լավ էին հաս-
կանում գրականության դերը ռեուլյուցիոն պայքարի մեջ, ճիշտ էին մոտե-
նում կլասիկ ժառանգության գնահատման հարցին, կարևոր նշանակություն
տալիս իդեոլոգիական խնդիրներին։ Պատահական չէ, որ «Պրոլետարիատում»
տպագրված «Սոցիալ-դեմոկրատիա և իրականություն» հոդվածում խմբագրու-
թյունն անդրադառնում է տեսական-գաղափարական հարցերի մշակման կա-
րևորությանը՝ ընդգծելով, որ միանգամայն սխալ են բուրժուական գաղափա-
րախոսների տարածած լուրերը, թե իբր սոցիալ-դեմոկրատիան ժխտում է թեո-
րիայի դերը հասարակական զարգացման մեջ։

* * *

1906 թվականի ապրիլի 1-ին լույս է տեսնում հայերեն առաջին բուլղարի-
յան լեզալ թերթի՝ «Կայծի» անդրանիկ համարը։ Ստ. Շահումյանի և Ս. Սպան-
դարյանի խմբագրությամբ հրատարակվող այդ թերթի երևան գալը ոչ պակաս
խոշոր քաղաքական իրադարձություն էր Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատա-
կան շարժման պատմության մեջ։ Լեզալ թերթը, որքան էլ նրա հրատարակու-
թյունը կապված լիներ մեծագույն դժվարությունների հետ, որքան էլ ցարա-
կան գրաքննության ջանքերով «մեղմացվեին» նրանում տպագրվող հոդված-
ները, կամ բոլորովին արգելվեին դրանք, այսուամենայնիվ ամբիոն էր, որտե-
ղից բուլղարիկները կարողանում էին խոսել բանվորական լայն մասսաների հետ։
Եթե անլեզալ թերթը, կոնսպիրատիվ աշխատանքի պայմաններում համեմա-
տաբար ավելի քիչ բանվորների էր հասնում, ապա «Կայծի» ընթերցողներն
անհամեմատ ավելի շատ էին։ Մյուս կողմից «Կայծը», ինչպես Ռուսաստանում
հրատարակվող մյուս բուլղարական թերթերը, լույս էր տեսնում նույն բանվոր-
ների հավաքած դրամական միջոցներով։

Պատահական չէ, որ «Կայծը» հրատարակվում էր 1906 թվականի գար-
նանը։ Խոսելով բանվորական լեզալ մամուլի մասին, Վ. Ի. Լենինը գրել է.

«Բանվորական բացահայտ մամուլը երևան եկավ վերելքի և համեմատա-
կան «ազատության» բոլոր երեք ժամանակաշրջաններում, թե՛ 1905 թվա-
կանի աշնանը... թե՛ 1906 թ. դարնանը... թե՛ 1907 թ. գարնանը»²։

¹ «Պրոլետարիատի կոիվը», 1903, ապրիլ-մայիս, № 2—3, էջ 6—7։

² Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 305, «Ռուսաստանի բանվորական մամուլի
անդյալից»։

Երևան գալով ահա ռևոլյուցիայի վերելքի պայմաններում, «Կայծը» հրակայական գեր է կատարում հայ պրոլետարական մասսաների դաստիարակության և նրանց ռևոլյուցիոն ելույթների պրակտիկ ղեկավարման ասպարեզում: «Կայծը» քայլ առ քայլ հետևում է ռևոլյուցիոն շարժմանը, մի շարք հոգվածներ է զետեղում Դումայի աշխատանքների կապակցությամբ: Պրոլետարական մասսաներին բացատրում է, որ նրանք ոչինչ չեն կարող ակնկալել կադետական Դումայից, «ոչ թե բուրժուական ռեֆորմները, այլ դեմոկրատական ռևոլյուցիան է Ռուսաստանի վերակազմության միակ ճանապարհը»¹:

«Կայծն» իր առաջին իսկ համարից պարբերաբար մերկացնում է ցարիզմի և տեղական բուրժուազիայի ժողովրդապաշտ քաղաքականությունը, բացահայտում նրանց հրահրած կոտորածների և ազգային թշնամանքի բուն պատճառները: «Կայծը» եղբայրություն է քարոզում Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատի միջև: Նույն թվականի մայիսին Բաքվում հրատարակվող «Կոշ-Դեվեթ» հայերեն և ադրբեջաներեն թերթի երևան գալը «Կայծը» ողջունում է ցնծությամբ և հատուկ հոգվածում շեշտում ժողովուրդների բարեկամության համար մարտնչող թերթի կարևորությունը:

«Կայծը» հոգվածներ է տպագրում պարտիայի շորրորդ՝ միավորիչ համագումարի մասին: Մերկացնում է մենշևիկների օպորտունիզմն ու պաշտպանում լենինի տեսակետները:

Վերահիշյալ բոլոր խնդիրների հետ միասին «Կայծն» այս կամ այն առիթով պարբերաբար անդրադառնում է կուլտուրայի, կրթության, արվեստի, դրականության հարցերին: Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը և նրանց ղեկավարած բոլշևիկյան թերթն այս բոլոր հարցերը մեկնաբանում են լենինյան պարտիականության դիրքերից: «Կայծի» հենց առաջին համարի առաջնորդողում («Մեր օրգանը»), ուր տրվում է ժամանակաշրջանի բնութագրությունը և թերթի նպատակները, Ստ. Շահումյանը բացահայտում է դասակարգային երկու իդեոլոգիաների առկայությունը բուրժուական ազգի մեջ: Շահումյանը նշում է, որ մարդկանց տնտեսական հարաբերությունների մեջ կատարված փոփոխությունը, փոփոխություն է առաջացրել նաև նրանց հասարակական գիտակցության մեջ: «Նախկին կղերա-պահպանողական «ազգասիրության» տեղ երևան է եկել մեր մեջ մի կողմից բուրժուական լիբերալիզմը, մյուս կողմից, որ ամենաբնորոշ գիծն է մեր նորագույն կյանքի, որ ամբողջովին նորություն է հայկական իրականության մեջ — երևան է եկել այն աշխարհայացքը, որը կոչվում է սոցիալիզմ և որի կրողն է բանվոր դասակարգը, պրոլետարիատը»²:

1906 թվականի օգոստոսի 6-ին Թիֆլիսի նահանգապետի կարգադրությամբ «Կայծը» փակվում է, սակայն օգոստոսի 18-ին թերթը կրկին հրատարակվում է արդեն «Նոր խոսք» վերնագրով և հարատևում մինչև սեպտեմբերի 20-ը:

«Նոր խոսքի» առաջին իսկ համարներում Ստ. Շահումյանն ու Ս. Սպանդարյանը վերստին անդրադառնում են իդեոլոգիական հարցերին: Այս տեսակետից հայ մարքսիստական մտքի զարգացման պատմության մեջ նշանակալից երևույթ է «Նոր խոսքի» 3—6-րդ համարներում տպագրված Ս. Սպանդարյանի «Դպրոցական հարցը և սոցիալ-դեմոկրատիան» հոդվածը:

¹ Ստ. Շահումյան, Կադետները և սոցիալ-դեմոկրատիան, Կայծ, 1906, № 16:

² Ստ. Շահումյան, Մեր օրգանը, Կայծ, 1906, № 1:

1905 թվականին «Новая жизнь»-ում տպագրված Վ. Ի. Լենինի «Պարտիական կազմակերպություն և պարտիական գրականություն» ուղենիշ աշխատությունը հասել էր Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան պարտիայի անդամներին: Լենինի զինակիցներն ու աշակերտները Լենինի նոր հանձարեղ աշխատությունն ընդունում էին որպես կոնկրետ ծրագիր թեորիական-իդեոլոգիական աշխատանքի ընտրված ուղի: Ս. Սպանդարյանի վերոհիշյալ հոդվածը ևս պետք է դիտել որպես կոլտուրայի և գրականության հարցերի կապակցությամբ մեծ Լենինի առաջ քաշած պրոբլեմների արձագանքը:

Վ. Ի. Լենինի աշխատությունն իր սուր ծայրով ուղղված էր անկումային, դեկադենտական, ռենեգատական գրականության ու կոլտուրայի, բուրժուական պարտիաների և գրական-կոլտուրական հոսանքների դեմ, որոնք, ինչպես սուղներն անձրևից հետո, երևան էին գալիս, միավորվում էին, պլատֆորմներ մշակում՝ ունենալով մեկ հիմնական նպատակ՝ թուլացնել ռևոլյուցիայի ընթացքը, շփոթության մեջ գցել, ապակողմնորոշել և այդ ճանապարհով զինափաթ առնել ռևոլյուցիայի շարժիչ ուժերը: Լենինի հոդվածը անգնահատելի ավանդ էր ռևոլյուցիոն մարքսիստական էսթետիկայի գանձարանում: Մերկացնելով բուրժուական կեղծիքը գրականության ապաքաղաքական, անպարտիական լինելու մասին, Լենինն ապացուցում էր, որ կապիտալիստական հասարակության պայմաններում անպարտիականությունը ոչ այլ ինչ է, քան եթե բուրժուական մամուլի, գրականության, կոլտուրայի լավ, կամ վատ քողարկված ծախվածությունը տիրապետող դասակարգերին: Միաժամանակ Լենինը ցույց էր տալիս, թե ինչպիսին պետք է լինի պրոլետարական, սոցիալիստական գրականությունը, որպեսզի կարողանա ծառայել ոչ թե վերին տասը հազարին, այլ միլիոնավոր աշխատավորական մասսաներին:

Լենինի աշխատության անմիջական ազդեցությամբ գրած հոդվածում Ս. Սպանդարյանը պաշտպանում է կոլտուրայի և գրականության Լենինյան պարտիականության տեսակետը: Բանակռիվ մղելով բուրժուական իդեոլոգիայի դեմ, առաջ քաշելով կոլտուրական հարցերի կարևորության խնդիրը, Ս. Սպանդարյանը նշում է, որ բուրժուական հասարակության մեջ պրոլետարիատն է այն դասակարգը, որի «շահերը, ձգտումները համապատասխանում են, իրենց օբյեկտիվ նշանակությամբ, հասարակական, ընդհանուր մարդկության զարգացման առաջադիմության»¹: Եվ եթե սոցիալ-դեմոկրատիան այս կամ այն դիրքն է բռնում կոլտուրական-սոցիալական հարցերի նկատմամբ, ապա նրա համար չափանիշը հենց այդ ղեկավար սկզբունքն է:

Խոսելով բուրժուական կոլտուրայի, գրականության և արվեստի մասին Լենինի ոգով, Ս. Սպանդարյանը մատնանշում է, որ «բուրժուական հասարակության մեջ ամեն բան դառնում է ապրանք, ծախու առնելու առարկա և այդ կանոնին ենթարկվում են ոչ միայն նյութական՝ ձեռքով շոշափելի իրերը, այլև մտավոր, ոչ-նյութական բաները՝ գիտություն, տաղանդ, շնորհ և այլն:

Իզուր են մեր գիտնականները, գրողները, նկարիչները մեծ-մեծ խոսում իրանց «ազատության» մասին, իզուր են իրանք իրանց բարձր դասում «շուկայից»: Նրանք բուրժուազիայի ծառաներն են և իրանց գործունեությունը համակերպում են բուրժուազիայի պահանջներին և ճաշակներին»²:

¹ Ս. Սպանդարյան, հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, 1939, էջ 70:

² Նույն տեղում, էջ 70—71:

Այսպիսով, ըստ արժանվույն բնութագրելով բուրժուական կուլտուրան, հայ բոլշևիկները հայ իրականության մեջ պրոպագանդում էին պրոլետարական կուլտուրայի և գրականության զարգացման անհրաժեշտության լենինյան գաղափարը: Հենց դրանով էլ պետք է բացատրել, որ նորաստեղծ պրոլետարական պոեզիան միշտ եղել է նրանց ուշադրության կենտրոնում: Միանգամայն օրինաչափ է նաև, որ «Կայծում», «Նոր խոսքում» Ստ. Շահումյանն ու Ս. Սպանդարյանն այնքան լայնորեն օգտագործում էին պրոլետարական գրականության հիմնադիր Մ. Գորկու թևավոր խոսքերն ու գեղարվեստական ասույթները, երբ բանավիճում էին հայկական բուրժուա-նացիոնալիստական հոսանքների և պարտիաների գաղափարախոսների դեմ:

* * *

1906 թվականի սեպտեմբերի 20-ին Թիֆլիսի նահանգապետի կարգադրությամբ փակվում է նաև «Նոր խոսքը»: «Նոր խոսքի» խափանումից հետո բոլշևիկյան հաջորդ թերթը՝ «Օրերը» լույս է տեսնում Բաքվում ռևոլյուցիայի երրորդ մակընթացության օրերին՝ 1907 թվականի փետրվարին: Թերթի աշխատանքները դարձյալ ղեկավարում են Ստ. Շահումյանն ու Ս. Սպանդարյանը: Բոլշևիկյան «Օրերը» կարճ կյանք է ունեցել, լույս է տեսել ընդամենը 8 համար: Սակայն, այդ կարճ կյանքում իսկ, թերթը կարևոր դեր է խաղացել Բաքվի հայ պրոլետարիատի դաստիարակման ու ռևոլյուցիոն պրակտիկ պայքարի ղեկավարման գործում: Թերթում մի շարք հոդվածներ են տպագրվել բուրժուական կադետական պարտիայի օրգանների դեմ, արտացոլվել է Բաքվի պրոլետարիատի պայքարն ընդդեմ նավթարդյունաբերողների, լայն բացատրական աշխատանք է տարվել ցարական Դոմայի բուրժուա-կալվաժատիական էությունը հայ աշխատավորության համար մեկնելու ուղղությամբ: Թերթն իր կարճատև կյանքում հնարավորություն չի ունեցել անդրադառնալու գրականության հարցերին:

Քաղաքական-գաղափարական հարցերի կապակցությամբ ընդհարվելով թերթի տնօրեն խմբագրի հետ, Ստ. Շահումյանն ու Ս. Սպանդարյանը դադարում են աշխատակցել «Օրերին»: Այդ մասին փետրվարի 10-ի 8-րդ համարում տպագրված հայտարարության մեջ նրանք խոստանում են. «Մեր ընթերցողներին կարճ ժամանակամիջոցում բավարարություն կտանք մի ուրիշ թերթով»: Սակայն «Օրերից» հետո հայ բոլշևիկները երկար ժամանակ հնարավորություն չեն ունենում հրատարակել որևէ հայերեն բոլշևիկյան թերթ: Ռուսաստանում և ցարական պետության ծայրամասերում մոլեգնում էր ստոլիպինյան ռեակցիան: Ռեակցիայի տարիներին ցարական կառավարությունը ետ խլեց այն նվաճումները, որոնք ձեռք էին բերել պրոլետարիատն ու գյուղացիությունը ռևոլյուցիայի վերելքի տարիներին: Փակվեց բոլշևիկյան թերթերի մեծ մասը, մամուլի, ժողովների, գործադուլների, ցույցերի ազատության մասին այլևս խոսք չի ներկայացրել: Լավ հասկանալով, որ ռևոլյուցիոն շարժման ղեկավար օրգանները բոլշևիկյան կենտրոններն ու տեղական կազմակերպություններն են, ցարական ինքնակալությունն առաջին հարվածներն ուղղում էր հենց դրանց դեմ: Երկրորդ Պետական Դոմայի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան դատի տրվեց, բանվոր դասակարգի ներկայացուցիչները հեռավոր աքսորավայրեր

ուղարկվեցին տաժանակիր աշխատանքի: Հազարավոր ռևոլյուցիոներներ ձերբակալվեցին, բանտարկվեցին և կախաղան բարձրացվեցին:

Ռեակցիան խոր հետքեր թողեց նաև զաղափարական աշխատանքի վրա: Գրականության, արվեստի, կուլտուրայի, փիլիսոփայության մեջ սկսեցին աճել բուրժուական դեկադանսի, անկումայնության, իդեալիզմի տարրերը: Մարքսիզմի «պաշտպանության» ֆրազներով հանդես եկած հակառևոլյուցիոն էլեմենտները սկսեցին մարքսիզմը նենգափոխել Կանտի և Յոմի իդեալիզմով: Ռևոլյուցիայի առաջնորդը՝ Վ. Ի. Լենինը «Մարքսիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» հանճարեղ աշխատությամբ (1909 թ.) պաշտպանեց մարքսիստական աշխարհայացքն այդ լիկվիդատորական ախտից՝ թեորիայի բնագավառում, ջախջախեց ռեակցիոն իդեալիստական ուսմունքի նոր տարատեսակները:

Ստոլիպինյան ռեակցիայի տարիներին, հակառակ մենշևիկների, որոնք նահանջում էին խուճապահար և պահանջում պարտիայի լիկվիդացիան, բուլճերիկները Լենինի դեկավարությամբ վարում էին կազմակերպված պաշտպանության տակտիկան: Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը բուլճերիկներին սովորեցնում էին՝ ամեն կերպ պահպանել ռևոլյուցիոն ուժերը, օգտագործել լեգալ հնարավորությունները, անլեգալ աշխատանքը զուգակցել բանվորական մասսայական կազմակերպություններում տարվող լեգալ աշխատանքի հետ:

1908—1911 թթ. ռեակցիայի պայմաններում հայերեն բուլճերիկյան թերթ շունենալով, հայ բուլճերիկները՝ Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը և ուրիշներ ամրանում են Բաքվում և Թիֆլիսում հրատարակվող ռուսերեն բուլճերիկյան թերթերում՝ «Գուդոկ» (մինչև 1908 թ. հունիս), «Բակինսկի պրոլետարի», «Բակինսկի ռաբոչի», «Լիստոկ կոպեյկա» և այլն:

Ինչպես վերոհիշյալ թերթերում, այնպես էլ առհասարակ ժամանակի մամուլում հրատարակած իրենց հոդվածներում հայ բուլճերիկները դնում էին պրոլետարական մասսաների մեջ լայն ագիտացիոն-մասսայական աշխատանք տանելու անհրաժեշտությունը: Նրանք ըմբռնում էին, որ պարտիայի ուժը մասսաների հետ ունեցած կապի մեջ է, մյուս կողմից՝ նրանք լավ էին հասկանում, որ ապագա ռևոլյուցիոն շարժման վերելքի համար հարկավոր է ժամանակից օգտվելով նախապատրաստել պրոլետարիատին: «Մենք ապրում ենք այնպիսի մի ժամանակ, երբ քրտնաջան և համառ աշխատանքը տեղերում — մասսաների լուսավորման, նրանց մտավոր մակարդակի բարձրացման, նրանց տեսաշրջանի լայնացման աշխատանքը — միակ խելացի և հանրորեն անհրաժեշտ գործունեությունն է հանդիսանում»¹: — գրում էր Ս. Սպանդարյանը 1910 թ. «Новая речъ» թերթում:

Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը և նրանց շուրջը համախմբված հայ բուլճերիկներն այլ հարցերի թվում մամուլում առաջ էին քաշում նաև գրականության և կուլտուրայի հարցերը: Կոմկոմ դեկադենտական անկումային գրականության դեմ, նրանք պրոպագանդում էին լիարյուն ռեալիստական գրականությունը, պաշտպանում էին պրոլետարական կուլտուրայի և գրականության դատը:

1910 թ. իր խմբագրությամբ հրատարակվող «Լիստոկ կոպեյկա» թերթի 5-րդ համարում տպագրված «Դարձյալ նույն հարցի մասին» հոդվածում, Ս. Սպանդարյանը պահանջում է գրականության բյուրեղացում, դասակարգայնացում և պարտիականացում: Նույն թերթի 1911 թ. 54-րդ համարում, սուր

¹ Ս. Սպանդարյան, հոդվածներ, 1949, էջ 163:

քննադատության ենթարկելով բարոյական դեգրադացիայի ենթարկված բուրժուական արվեստը, Ս. Սպանդարյանն առաջ է քաշում իսկական ժողովրդական արվեստի հարցը:

«Ժողովրդական բեմը դարձել է կաֆե-շանտան:—Դառնացած նկատում է Սպանդարյանը:— Եվ այդ գոեհիությունը տեղի է ունենում ուկրաինական մեծ բանաստեղծ, բազմատանջ պոետ, ժողովրդական գուսան Տարաս Շևչենկոյի մահվան հիսնամյակի օրը»¹:

Բերված քաղվածքից պարզ երևում է, թե էսթետիկական ինչ ելակետից էին մոտենում հայ բուլշևիկները գրականության հարցերին, ինչքան բարձր էին գնահատում անցյալի կլասիկ ժառանգությունը, տվյալ դեպքում ուկրաինական ժողովրդի հանճարեղ Կոբզարին: Նույնը կարելի է ասել Տոլստոյի գրական ժառանգության գնահատման մասին: Վ. Ի. Լենինի ոգով տարբերություն տեսնելով Տոլստոյի ստեղծագործության և նրա քաղաքական համոզմունքների մեջ, նկատի ունենալով գեղարվեստական գրականության սպեցիֆիկան, Ս. Սպանդարյանը գրում է.

«Մենք Տոլստոյին չենք գնահատել իբրև խոսքի արվեստագետ, իբրև մարդկային հոգու ճանաչողի, այս առթիվ երկու կարծիք լինել չի կարող:

Մենք նրան գնահատել ենք իբրև քարոզչի, իբրև «նոր» կյանքի ուսուցչի— գտել ենք, որ նրա ուսմունքը վնասակար է, ոեակցիոն, չի համապատասխանում պրոլետարիատի շահերին, ձեռնառն է բուրժուազիային»²:

1910 թ. առանձին գրքույկով հրատարակվում է Հ. Հակոբյանի «Նոր առավոտ» պոեմը: Հայտնի է, թե որքան ջերմ վերաբերմունքի է արժանացել պոեմը Ստ. Շահումյանի կողմից: Բարձր գնահատելով պրոլետարական պոետի առաջին ծավալուն երկը, այն ավելի կատարյալ տեսնելու ցանկությամբ, Ստ. Շահումյանը բազմաթիվ դիտողություններ է արել Հ. Հակոբյանի ուղարկած գրքույկի լուսանցքներում, դիտողություններ, որոնք օգնել են բանաստեղծին հետագայում պոեմը վերամշակելիս:

Տող առ տող քննելով «Նոր առավոտը», Ստ. Շահումյանը դիտողությունների մեջ շեշտում է ստեղծագործական բարձր գաղափարի և այն գեղարվեստական կատարյալ ձևի մեջ մարմնավորելու էսթետիկական հարցը: Նա պոեմի արժանիքը գտնում է ոչ միայն թեմայի, նոր, պրոլետարական բովանդակության մեջ, այլև նոր ձևի մեջ, լեզվական այն ֆակտուրայում, որ հայ գրականության մեջ էր ներմուծում Հ. Հակոբյանը:

Ս. Սպանդարյանը հատուկ հոգված է գետնել 1911 թ. «Լիստոկ կոպեյկայի» 21-րդ համարում, ուր բարձր է գնահատում պոեմը, շեշտելով, որ հակառակ բուրժուական ազգայնական գրողներին, Հ. Հակոբյանը տուրք չի տալիս «թմբկա-հայրենասիրական» մոտիվներին և բոլորովին նոր, համամարդկային նշանակություն ունեցող մոտիվներ է բերում հայ գրականության մեջ:

Պետք է նկատի ունենալ, որ հոգվածը գրված է այն ժամանակ, երբ հրեական «Բունդի» կովկասյան կրեատուրայի, սպեցիֆիկյան հակառևոլյուցիոն կազմակերպության պարագլուխ տխրահուշակ Բ. Իշխանյանը, Հ. Հակոբյանի ստեղծագործության մասսաների վրա թողած ազդեցությունն ու արժեքը նսեմացնելու համար, արշավանք էր սկսել նրա դեմ: Այս փաստի մեջ իսկ ակնհայտո-

¹ Ս. Սպանդարյան, Հոգվածներ, 1949, էջ 24:

² «Բախինսկի ռաբոչի», 1908, № 7—8, «Աղետի» գալուցի—Տես Ս. Սպանդարյան, Հոգվածներ, 1949, էջ 11:

րեն երևան է գալիս քաղաքական երկու հակամարտ հոսանքների էսթետիկական հայացքների անհաշտությունը:

Հայ բոլշևիկներին հաջողվում է հայերեն մարքսիստական օրգան ստեղծել միայն 1911 թ. վերջերին: Այդ տարվա նոյեմբերին Ստ. Շահումյանի խմբագրությամբ և Ա. Կարինյանի ակտիվ մասնակցությամբ Բաքվում հրատարակվում է «Նոր խոսք» երկշաբաթաթերթի 1—2-րդ միացյալ համարը¹:

Պրակտիկ աշխատանքի օպերատիվ ղեկավարման իմաստով «Նոր խոսքը», իհարկե, նույն գերը չի կատարել, ինչ որ իր ժամանակին կատարել է «Կայծը», սակայն, «Նոր խոսքն» իր հերթին ամբիոն էր, որտեղից Ստ. Շահումյանն ու նրա շուրջը համախմբված հայ բոլշևիկները դեռ մոլեգնող ոեակցիայի պայմաններում մարքսիզմի գաղափարներն էին տարածում հայ պրոլետարական մասսաների մեջ:

«Նոր խոսքի» առաջին գրքում է հրատարակվել Ստ. Շահումյանի «Տիեզերական թուփակը» հայտնի գրախոսության առաջին մասը (հաջորդ մասերը չեն հրատարակվել Ստ. Շահումյանի ձեռքակալության պատճառով), ուր կրակի տակ առնելով դաշնակցության պարագլուխ Մ. Վարանդյանի «Հոսանքներ» գիրքը, Ստ. Շահումյանը փաստորեն մերկացնում է ողջ դաշնակցությանը, ցույց տալով, որ «սոցիալիզմի սիրահար» դարձած դաշնակ գրչակների մտավոր պաշարը հեռու չի գնում բուրժուական պրոֆեսոր Զոմբարդի թեթևամիտ «քրննադատական» մարզանքներից՝ ընդդեմ մարքսիզմի, իսկ նրանց նպատակը գիտական սոցիալիզմի ուսմունքը բուրժուական սոցիոլոգիայով նենգափոխելն է:

Թերթի նույն համարում է լույս տեսել Ստ. Շահումյանի մեկ ուրիշ հոդվածը՝ «Իրականություն և հեռանկարներ», ուր մարքսիստական պատմագրության գիրքերից տրվում է Ռուսաստանի ներքին դրության բնութագիրը 1861 թվականի ռեֆորմից մինչև XX դարի առաջին տասնամյակը:

«Նոր խոսքում» տպագրվել են գրական հարցերին նվիրված մի շարք հոդվածներ ու գրախոսականներ, որոնց մեծ մասի հեղինակը Ա. Կարինյանն է: Դրանք բացառապես վերաբերում են անցյալի և ժամանակակից գրականության գնահատման հարցերին: Հոդվածները լույս «գրական պատմական էսքիզներ» չեն, ինչպես անվանում է դրանք հեղինակը: Դրանք որոշակի կոնցեպցիայի շարադրանք են և սուր ծայրով ուղղված են բուրժուական-նացիոնալիստական պրականագիտության դեմ: Իհարկե, Ա. Կարինյանի որոշ ձևակերպումներ հնացել են, սակայն պատմական ժամանակաշրջանի առումով այդ հոդվածներն ուշագրավ երևույթ են որպես մարքսիստական թերթի խոսքն ընդդեմ բուրժուական իդեոլոգիայի, ընդդեմ սպեցիֆիկյան հակառեկոյցիոն գաղափարախոսության:

«Նոր խոսքի» առաջին գրքում տպագրվել է Ա. Կարինյանի հոդվածն ընդդեմ Բ. Իշխանյանի: Հոդվածում հակադրվելով Բ. Իշխանյանին, Կարինյանը ժխտում է գրական ժառանգության գնահատման գոեհիկ սոցիոլոգիական, իր բառերով ասած՝ «գոեհիկ քաղաքացիական» սիստեմը: «Դժվար է,— գրում է Կարինյանը,— անհնարին է, իհարկե, գտնել դասակարգային հասարակության մեջ բանաստեղծ, որի արտահայտությունների մեջ չլինեն դասակարգային աշխարհայացքի որոշ հետքեր, ազդեցություն, բայց այդ իրավացի դրությունից

¹ Թերթն ունեցել է միայն երեք միացյալ համար (1—2, 3—4, 5—6), հաջորդ միացյալ համարները հրատարակվել են 1912 թ., երբ Ստ. Շահումյանը ձեռքակալված էր:

չպիտի եզրակացնել, որ զեղարվեստի բոլոր գործիչները պիտի նետվեն զանազան նեղ վանդակներ և զարգարվեն որոշ մակդիրներով»¹։

Բերելով Գլեբ Ուսպենսկու ստեղծագործության օրինակը և բացահայտելով Բ. Խիսանյանի տգիտությունը, Ա. Կարինյանը նշում է, որ մի կողմից գրողի քաղաքական հայացքների և մյուս կողմից ստեղծագործության օբյեկտիվ գեղարվեստական-հասարակական արժեքի միջև կարող են լինել էական տարբերություններ։ «Նա,— գրում է Կարինյանը Բ. Խիսանյանի մասին,— որակում է Գլեբ Ուսպենսկուն որպես «տուլուպի սենտիմենտալ ապոլոգետ», որ «մուժիկի կյանքի իդեալիզացիայով» արբեցած էր։ Ասել այդ, նշանակում է ցույց տալ իր անձանոթությունը միևսպենսկու հետ, որը սենտիմենտալ չէր, և երկրորդ՝ «արբեցած չէր մուժիկի կյանքի իդեալիզացիայով»։ Դա ռեալիստ, շափազանց ռեալիստ մի գրող էր։ Նա հաճախ նկարագրում էր գյուղացիական կյանքի այնպիսի մոայլ անկյուններ, որոնք քանդում էին հենց նրա հասարակական-նարոդնիկական հայացքները»²։

Այսպես, ուրեմն, անցյալի կլասիկ գրականության գնահատման խնդրում հայ բոլշևիկները ելնում են լենինյան արտացոլման տեսությունից։ Նույնը կարելի է հաստատել թերթում տպագրված մի այլ հոդվածով, ուր վերլուծության է ենթարկվում Գր. Զոհրապի ստեղծագործությունը։ Հոդվածում կարդում ենք. «Նկարագրելով հասարակական նոր միջավայրը, նրանք (Զոհրապը և նրա շկուլայի գրողները — Խ. Դ.) միաժամանակ ողբում, զայրանում և վրդովվում են։ Խոր և հիրավի անկեղծ տանջանքով են դիտում նրանք ժամանակակից իրականության կոնտրաստները՝ դասակարգային ներհակությունները, քաղաքի մոայլ ու թշվառ բնակիչների հուսահատ կացությունը միաժամանակ վերին շերտերի «շուայլ և զեխ» կյանքի հետ։ Եվ, հաճախ նկարագրողից, ցամաք արձանագրողից դառնում են քաղաքի և ժամանակակից հասարակական-քննադատներ, խարազանողներ ու կարծես հրավիրում են բոլորին քանդել, ավերել ժամանակակից հասարակարգը...»³։

Այստեղ էլ, ինչպես տեսնում ենք, շեշտը դրվում է կյանքի ռեալիստական արտացոլման վրա։ Ռեալիստական մեթոդը ստեղծագործական աշխատանքի պրոցեսում գրողին հանդեպնում է երբեմն այնպիսի հետևությունների, որոնք բառացիորեն չեն համընկնում նրա քաղաքական հայացքների հետ։ Հասկանալի է, օրինակ, որ Գր. Զոհրապի քաղաքական համոզմունքների հետ չի համընկնում «ժամանակակից», այսինքն՝ բուրժուական հասարակարգը քանդելու, ավերելու հրավերը, այդ հասարակարգը կործանելու անհրաժեշտությունը, սակայն քննադատական ռեալիզմի մեթոդով ստեղծված երկը ընթերցողին հասցնում է դասակարգային հասարակարգի ժխտման անկախ գրողի ցանկությունից, իսկ երբեմն նաև հակառակ այդ ցանկություն։ Այլ է հեղինակի հայացքը, նրա քաղաքական ծրագիրը, այլ այն օբյեկտիվ եզրահանգումը, որին հասցնում է երկը։ Խոսելով հեղինակի սուբյեկտիվ հայացքների, նրա նախասիրությունների, նրա առաջարկած քաղաքական ծրագրի մասին Ա. Կարինյանն իրավացիորեն նկատում է, որ Զոհրապն ու նրա շկուլայի գրողները դուրս չեն գալիս հասարակական կարգի օբյեկտիվորեն քննադատողի դերից։ Նրանք չեն կա-

¹ «Նոր խոսք», 1911, № 1—2, էջ 70—71։

² Նույն տեղում, էջ 71—72։

³ «Նոր խոսք», № 3—4, էջ 84։

րողանում առաջարկել անարդար կարգերի փոխման որևէ ծրագիր, իսկ երբ առաջարկում են այդպիսիք, հեռու չեն գնում մանր-բուրժուական ուտոպիական հայացքների սահմաններից: Փաստորեն ստացվում է այնպես, որ նրանց քննադատությունն ուղղվում է ոչ թե դասակարգային տնտեսակարգի դեմ ընդհանրապես, այլ «մենծ աղաների»: Նրանց իդեալը նույն սեփականատիրական հասարակարգն է, «առանց իր հակադրական կողմերի, առանց մոայլ ու մթին հատկությունների, առանց «մենծ աղաների»:

Իսկ ո՞րն է նրանց ելակետը, այն այս կամ այն շափով կապ ունի՞ արդյոք կյանքի առաջընթացի նորմալ պրոցեսի հետ, այլ կերպ ի՞նչ դիրքերից են քրննադատում նրանք կապիտալիզմի գերիշխանությունը: Այս հարցի մեջ է թաքնված հենց Զոհրապի և նրա շկուլայի գրողների աշխարհայացքային սահմանափակությունը:

Նրանց առաջարկած քաղաքական ծրագիրն ուտոպիական է ոչ միայն այն պատճառով, որ այդ ծրագիրը հանդուրժում է սեփականատիրական տնտեսակարգը, այլև այն պատճառով, որ կապիտալիստական քաղաքի քննադատությունը նրանք հաճախ կապում են նահապետական գյուղի կարգերի պաշտպանության հետ, ընդ որում այդ գյուղն աշխատում են պատկերել որպես խաղաղ ու երջանկավետ մի վայր: Այդ պատճառով էլ նրանց ստեղծագործության մեջ երբեմն քաղաքի մոայլ պատկերներին հակադրվում է նահապետական գյուղի մանր-բուրժուական «իդիլիան»:

Մեզ զբաղեցնող հարցի տեսակետից հետաքրքրական է թերթի վերջին՝ 5—6-րդ համարում տպագրված «Քաղաքի երգիչներ» հոդվածը, ուր խոսվում է Վ. Տերյանի և Հ. Հակոբյանի ստեղծագործությունների մասին: Այստեղ Վ. Տերյանի ստեղծագործությունը (խոսքը մինչև 1911 թ. լույս տեսած բանաստեղծությունների մասին է) դիտվում է որպես սիմվոլիստական ուղղության պոեզիա: Տերյանին բնութագրելով, որպես վերլենյան, բողիբրյան պոեզիայի ներկայացուցիչ, հոդվածագիրը գտնում է, որ Տերյանի ստեղծագործությունը որևէ ազգային յուրահատկություն չունի: Իր բանաստեղծություններում արևմտաեվրոպական և ռուսական իր ընկերակիցների նման, Տերյանը ևս հանդես է գալիս որպես մեծ քաղաքի երգիչ, որը մի կողմից ձանձրացած ու զզված է նրա աղմուկից, մյուս կողմից չի կարող նրանից կտրվել: Դրանից էլ առաջանում է նրա հուսահատությունն ու հեքիաթային աշխարհներ երագելու տենդենցը:

Հոդվածում սիմվոլիստական գրականության այս թուղցիկ բնութագրությունից շատ ավելի կարևորն այն է, որ Վ. Տերյանի «Վերադարձ» շարքը դիտվում է որպես մի համարձակ քայլ դեպի ժողովուրդը, դեպի պրոլետարական գրականությունը, «մի քայլ դեպի քաղաքի գործարանային բնակիչների մարտական շարքերը»: Մարքսիստական թերթը նկատում և ողջունում է Տերյանի անցումը, ինչպես նաև ճիշտ կերպով նշում, որ «բարեհաջող միջավայրում և նպաստավոր պայմաններում» կփոխվի պոետի հոգեբանությունը, նա «կվառվի նոր հոգեզերով ու տենչերով»:

Ուշագրավն այն է, որ այստեղ դեղարվեստական գրականության զարգացման հեռանկարները կապվում են հասարակական-քաղաքական անցուդարձերի հետ, հակառակ բուրժուական ինքնակա, ինքն իր համար արվեստի թեորիայի առաջ է քաշվում կյանքից բխող և կյանքին ծառայող արվեստի, ըստ էության, քաղաքական պրոբլեմի: Ինչ վերաբերում է «բարեհաջող միջավայր» և

«նպաստավոր պայմաններ» տերմիններին, ապա մեզ համար պարզ է, թե ինչ էին հասկանում հայ բոլշևիկները դրանց տակ: «Բարեհաջող միջավայր» ասելով, նրանք նկատի ունեին պրոլետարական միջավայրն իր եռացող առաջընթաց շարժմամբ, «նպաստավոր պայմանները» ոչ այլ ինչ էին, քան եթե ռևոլյուցիոն շարժման ալիքի սպասվող բարձրացումը, որն իրապես հետագայում խոր ազդեցություն թողեց Տերյանի ստեղծագործության վրա՝ սիմվոլիզմից նրան պրոլետարական պոեզիային հասցնելով:

Հոգվածում Հ. Հակոբյանի պոեզիան ևս քննվում է նույն պրոլետարական շարժման ընթացքի տեսակետից, նշվում է, որ Հ. Հակոբյանն է այն պոետը, որը պատկերում է պրոլետարիատի կյանքն ու հոգեբանությունը ոչ միայն իր ռևոլյուցիոն համոզմունքներից ելնելով, այլև խորապես ապրելով կոնկրետ պրոլետարական շարժմամբ, անխզելիորեն կապվելով ռևոլյուցիոն դասակարգի պրակտիկ պայքարի հետ:

* * *

1912 թվականի գարնանը փակվում է «Նոր խոսքը»: Այնուհետև մինչև 1914 թվականը հայ բոլշևիկները հնարավորություն չեն ունենում հրատարակել իրենց հայերեն պարբերականը:

1912 թվականի ապրիլին Լենայի կրակոցներով սկսվեց այն էտապը, երբ երկրի ներքին կացությունն օրավուր ավելի էր հիշեցնում 1905 թվականի նախօրյակը:

Ռևոլյուցիոն շարժման այս վերելքի տարիներին անգնահատելի դեր խաղաց բոլշևիկյան «Պրավդա» թերթը, որը լույս տեսավ 1912 թվականի մայիսի 5-ին Լենինի ցուցումով, Ստալինի, Օլմինսկու և Պրետսեի նախաձեռնությամբ: Իր հրատարակման առաջին իսկ օրից «Պրավդան» դարձավ ռևոլյուցիոն պրոլետարիատի և գյուղացիության պայքարի ղեկավար կենտրոն: «Պրավդայի» էջերից Լենինն ու Լենինյանները ղեկավարում էին կոնկրետ պրակտիկ պայքարը, լեզալ աշխատանքը զուգակցում էին ռևոլյուցիոն անլեզալ աշխատանքի հետ, պատրաստում էին տեղերում ռևոլյուցիոն աշխատանքը ղեկավարելու ունակ կադրեր: «Պրավդան» քայլ առ քայլ իր կողմն էր գրավում բանվորական մասսաներին: «Պրավդան» լայն բացատրական աշխատանքի շնորհիվ մենշևիկյան-լիկվիդատորական կազմակերպությունները հեղինակազրկվում, ջախջախվում էին: «Պրավդան» անողոք պայքար էր մղում կառավարական պարտիաների և կադետների դեմ, Դումայի բոլշևիկյան ֆրակցիայի հետ միասին մերկացնում նրանց հակառևոլյուցիոն քաղաքականությունը: Ռևոլյուցիոն շարժման պատմության մեջ երբեք ոչ մի թերթ այնքան խոշոր դեր չի կատարել, որքան «Պրավդան», իզուր չէ, որ այդ տարիներին բոլշևիկներին պրավդիսաններ էին կոչում:

Անդրկովկասի հայ բոլշևիկները, հայ պրավդիստները լավ էին հասկանում «Պրավդա» թերթի նշանակությունը և իրենց առջև դրված կարևոր խնդիրներից մեկն էին համարում պրավդիստական ուղղության հայերեն թերթի հրատարակությունը: Դեռևս 1913 թվականի վերջերին Թիֆլիսի բոլշևիկները ձեռնարկում են այդպիսի մի թերթ հրատարակելու աշխատանքին: 1914 թ. հունվարի 26-ին հրատարակվում է «Մեր խոսքը» շաբաթաթերթի առաջին և միակ համարը, որն իր «վտանգավոր ուղղության» համար անմիջապես բռնազրավվում է իշխանության կողմից: «Մեր խոսքը» խմբագրում և հրատարակում է

Ստ. Շահումյանը, հին բոլշևիկ, հանգուցյալ Աշոտ Թումանյանի աշխատակցությամբ:

Թերթն առաջնորդող հոգևածում բացատրում է իր նպատակը և նշում իր բոլշևիկյան ուղղությունը: «Լինելով հետևողական մարքսիզմի արտահայտիչ և բերան գիտակից ու կազմակերպ հայ բանվորության, — կարդում ենք առաջնորդողում, — «Մեր խոսքն» աշխատելու է տարածել և խորացնել հայ կյանքում՝ հայ բանվորության և դեմոկրատիայի լայն խավերում այդ ուսմունքի սկզբունքները, վերլուծել ու լուսաբանել բոլոր քաղաքական սոցիալ-տնտեսական և հասարակական դեպքերն ու երևույթները, հրապարակ հանել հայ բանվորության պահանջներն ու իդեալները, մոտեցնել ու կապել նրան իր վիճակակից այլազգ բանվորությունների հետ, դարձնելով նրան միջազգային պրոլետարիատի ընտանիքի հարազատ անդամը»:

Պատահական չէ, որ Թերթի առաջնորդողում շեշտվում է հայ պրոլետարիատին «իր վիճակակից այլազգ բանվորությունների» հետ մերձեցնելու գաղափարը: Թերթի կարևոր խնդիրներից մեկը հենց պրոլետարական ինտերնացիոնալիզմի պրոպագանդան է եղել:

Թերթում տպագրվել է Ստ. Շահումյանի «Զորրորդ Պետական Դուման» հոդվածը, ուր, շեշտելով այն սարսափը, որ ռևոլյուցիայի վերելքի հետևանքով համակել էր կառավարող պարտիաներին ու կադետներին, Ստ. Շահումյանը միաժամանակ նշավակում էր Դումայի մենշևիկյան-լիկվիդատորական ֆրակցիայի դիրքը ռևոլյուցիոն շարժման, ազգային հարցի և այլ հարցերի կապակցությամբ:

Հետաքրքրական է, որ Թերթում տպագրվել է Մ. Գորկու «Ամեն տեղ է» հայտնի պատմվածքի առաջին մասը: Շարունակությունը լույս չի տեսել Թերթի խափանման պատճառով: Բոլշևիկները Մ. Գորկու ստեղծագործությունը տպագրում և մասսայականացնում էին ի հակադրություն ժամանակի դեկադենտական, անկումային գրականության: Նույն «Ամեն տեղ է» պատմվածքը, արդեն լրիվ, Գորկու բազմաթիվ այլ գործերի հետ, տպագրվում է հետագայում սոցիալ-դեմոկրատական «Պայքար» Թերթում, որի աշխատանքներին մինչև 1917 թվականի մայիս ամիսը ակտիվորեն մասնակցում էին բոլշևիկները:

1912 թվականի ապրիլին սկսված ռևոլյուցիոն վերելքի շրջանն ընդմիջվում է առաջին համաշխարհային պատերազմով, որն սկսվեց 1914 թվականի հուլիսին:

1915 թ. դեկտեմբերին Թիֆլիսում սկսեց լույս տեսնել սոցիալ-դեմոկրատական «Պայքար» Թերթը:

«Պայքարը» զուտ բոլշևիկյան Թերթ չէր: «Պայքարին» աշխատակցում էին նաև մի խումբ մենշևիկներ, սակայն, մինչև 1917 թ. մայիս ամիսը, Թերթում դեկավար դերը գտնվում էր բոլշևիկների ձեռքին:

Թերթին նույնիսկ թեթևակի ծանոթանալով, յուրաքանչյուր մարդ լավ կարող է նկատել, որ հենց առաջին համարից որոշակիորեն տարբերվում են երկու ուղղությունները: Բոլշևիկները ոչ մի զիջում չեն անում մենշևիկ խմբագիրներին, ընդհակառակը, Ստ. Շահումյանի գլխավորությամբ հայ բոլշևիկները՝ Անաստաս Միկոյանը, Արսեն Ամիրյանը, Ասքանազ Մռավյանը, Մելիք Մելիքյանը, Հակոբ Հակոբյանը, Արտաշես Կարինյանը, Սիմակը, Հակոբ Կամարին, Հովհաննես Պողոսյանը և ուրիշներ, բոլոր հարցերում անց են կացնում լենինյան տեսակետները: Ուշագրավ է, որ ցարական գրաքննություն

ամեն կերպ արգելակել է բոլշևիկյան հայացքների հրապարակումը, ջնջել և արգելել բոլշևիկների հողվածները, մինչդեռ մենշևիկյան հողվածները ապագրվել են գրեթե անփոփոխ:

«Պայքարում» Ստ. Շահումյանի շուրջը համախմբված բոլշևիկները բազմաթիվ հողվածներ են գրել ամենաբազմապիսի թեմաներով, սկսած ներքին տեսությունից և բանվորական շարժման պրակտիկ հարցերին նվիրված հողվածներից մինչև տեսական-թեորիական հողվածները, որոնցով ղարգացրել ու պրոպագանդել են գիտական սոցիալիզմը հայ իրականության մեջ: «Պայքարում» է զարգացել նախառևոյուցիոն շրջանի հայ բոլշևիկյան գրաքննադատությունը: Այդ տեսակետից «Պայքարի» շրջանը հայ բոլշևիկյան գրաքննադատության պատմության կարևոր էտապներից մեկն է:

«Պայքարում» բոլշևիկների տպագրած գրականագիտական հողվածները կարելի է խմբավորել մի քանի հիմնական հարցերի շուրջը:

Ա. Պայքար բուրժուա-նացիոնալիստական և անկումային-դեկադենտական գրականության ու գրականագիտության դեմ:

Բ. Գրականության պարտիականության և ժողովրդայնության հարցերը:

Գ. Պրոլետարական գրականության զարգացման հարցերը:

Դ. Գրական ժառանգության գնահատման հարցերը և այլն:

Այս բոլոր հարցերն, իհարկե, չեն քննվել միմյանցից անջատ, ընդհակառակը, սրանք բոլորն էլ մարքսիստական գրականագիտության անբաժանելի կողմերն են: Անհնար է գտնել ոչ միայն «Պայքարում», այլև առհասարակ նախառևոյուցիոն շրջանի բոլշևիկյան մամուլում որևէ գրականագիտական հողված, ուր այս հարցերը միանգամայն հասկանալի պատճառով հանդես չգային միասնաբար: Դրան պետք է ավելացնել նաև, որ «Պայքարում» տպագրված հողվածների մի խոշոր մասը զուտ գրականագիտական հողվածներ չեն, այլ ընդհանուր, քաղաքական, թեորիական հարցերին նվիրված հողվածներ, ուր պոլեմիկական նպատակով օգտագործվում է գրական-գեղարվեստական որոշ մատերիալ, հարևանցի ակնարկվում է այս կամ այն գրականագիտական թեզը, կամ պարզապես տրվում է որևէ էսթետիկական-մարքսիստական ֆորմուլիրովկա:

«Պայքարում» գրական հարցերին նվիրված առաջին հողվածը Ասք. Մռավյանի գրախոսությունն է՝ «Կարմիր մեխակներ» և «Բանվորի ալբոմ» ժողովածուների մասին («Պայքար», 1915, № 3):

1914 թ. իմպերիալիստական պատերազմի նախօրյակին Հ. Հակոբյանի և Մ. Արագու խմբագրությամբ լույս են տեսնում պրոլետարական գրականության առաջին ամսականները՝ «Կարմիր մեխակները» և «Բանվորի ալբոմը»:

Այդ ժամանակ Հ. Հակոբյանն արդեն հանդես չէր գալիս որպես հայ պրոլետարական գրականության միակ ներկայացուցիչը: Հ. Հակոբյանն արդեն ճանաչված գրող էր, բազմաթիվ բանաստեղծությունների և երկու ծավալուն պոեմների («Նոր առավոտ», «Կարմիր ալիքներ») հեղինակ: Հ. Հակոբյանը մի գրող էր, որ նոր դպրոց էր հիմնադրել հայ գրականության մեջ: Եվ, բնականաբար, նրա շուրջն էին համախմբվել նրա դպրոցի կրտսեր ներկայացուցիչները՝ Արագին, Ան. Վարդանյանը, Հ. Կամարին, Մ. Մելիքյանը և ուրիշներ: Այս գրողներն իսկապես պրոլետարական մեծ բանաստեղծի աճեցրած բանվորական ջրականության առաջին կարմիր մեխակներն էին հայ գրականության ծաղկանոցում: Նոր սկսվող գրական այս շարժումը գորկիական ուղղության ծաղկումն էր հայ

գրականության մեջ և որպես այդպիսին տրամագծորեն հակադրվում էր այդ ժամանակներում աշխուժացող բուրժուա-նացիոնալիստական անկումային դրականությանը:

«Կարմիր մեխակներին» երևան գալը առաջինը ողջունել է «Պրավդան»։ «Պրավդան» առանձին գրախոսական է տպագրել, ուր ջերմորեն խրախուսում է ալմանախների հրատարակումը, որպես կարևոր երևույթ պրոլետարական գրականության պատմության մեջ և նշում ալմանախներում տպագրված նյութերի գաղափարական-գեղարվեստական արժանիքները: «Հ. Հակոբյանը,— գրում է «Պրավդան»,— արտաքուստ հանգիստ, սակայն խոր զգացմունքով հագեցած տողերում նկարագրում է հզոր ֆաբրիկան — մեքենաների աղմուկը, հնոցի բոցը, բանվորների ուրվագծերը և այն անլուելի զորոցը, որն առաջացնում է առույգ ձգտումներ ու ցանկություններ... Ժողովածուների մյուս մասնակիցները սկսնակ գրողներ են: Ժամանակակից կյանքի կոնտրաստները, գիշերը մեծ քաղաքի փողոցներում, պայքար, աքսոր,— ահա այն մոտիվները, որոնք գծագրված են ժողովածուի հեղինակների կողմից՝ մի փոքր անհարթ, բայց շատ անկեղծ և ճշմարտացի: Հետաքրքիր է երիտասարդ գրող Վարդանյանի «Ուրվականներ» էսքիզը: Հեղինակը ընդհանուր գծերով պատկերում է «ուժեղների» և բողոքողների պորտրետները...»¹:

Նույն ոգով են հանդես գալիս հայ բուլժեիկները «Պայքարում»՝ պաշտպանության տակ առնելով առաջին բանվորական ալմանախները հայ գրականության մեջ:

Ասք. Մուսվաթյանը Հ. Հակոբյանի շուրջը համախմբված գրողներին դիտում է որպես Մ. Խորկու ստեղծած գրական ուղղության ներկայացուցիչներ: «Մեր ժողովածուներում խմբված երիտասարդները պրոլետարական գեղարվեստի աշխարհում համեստ ուժեր են,— գրում է Մուսվաթյանը,— բայց ի նկատի առնելով հայ իրականության սպանիչ մթնոլորտը՝ մենք ամբողջ սրտից ողջունում ենք նրանց առաջին քայլերը»:

Ասք. Մուսվաթյանի գրախոսությունը փոքր է, սեղմ, բայց այդ սեղմ տողերում իսկ երևում է, թե որքան խոր էին հասկանում հայ բուլժեիկները գրականության հարցերը և որքան պարզ պատկերացում ունեին պրոլետարական գրականության հեռանկարների մասին:

Ժողովածուներում Հ. Հակոբյանը զետեղել է ընդամենը երեք բանաստեղծություն, որոնց թվում «Քաղաքը»: Ասք. Մուսվաթյանը շեշտը դնում է հենց վերջինիս վրա: «Այդ բանաստեղծությունը,— գրում է նա,— Հ. Հակոբյանի ստեղծագործության քվինտ-էսենցիան կարելի է համարել»: Ի՞նչն է, որ այդքան գրավում է Մուսվաթյանին: Ոչ միայն այն, որ բանաստեղծության մեջ թեման բարձրացված է «շեշտակի լեզվով և խիստ գույներով», այլև այն, որ Հ. Հակոբյանի բանաստեղծությունը բուրժուական քաղաքի սոսկ ուրբանիստական նկարագրություն չէ, այլ առաջին հերթին ռևոլյուցիոն վերելքի, ռևոլյուցիայի հաղթանակի նկատմամբ բանաստեղծի ունեցած պայծառ հավատի մարմնացումը: «Քաղաքի» մեջ ընթերցողն զգում է խոշոր կապիտալիստական քաղաքի ինքնատիպ դեղեցկությունը, բայց և միաժամանակ զգում է ռևոլյուցիոն պրոլետարիատի ուժը, այն ուժը, «որի ծով թափին չի դիմանալու ոչ մի ամբարտակ»: Ռևոլյուցիայի վերջնական հաղթանակի նկատմամբ ունեցած հավատն

¹ «Путь Правды», 1914 թ., 13/9, № 50, հոդվածի հեղինակն է հին բուլժեիկ բնկ. Պ. Կարինյանը:

այն չափանիշն է, որով հայ բուլղերը չափում է երկի գաղափարական արժեքը: Պատահական չէ, որ ժողովածուներում տպագրված Արազու երեք զործերից («Կիսատ տունը», «Արևը», «Սպիտակ հերոսուհին») նա ավելի բարձր գնահատական է տալիս առաջինին: Հաջող է մանավանդ «Կիսատ տունը», — գրում է Մուսվյանը: — Արազի գույները քնքուշ են, բայց և որոշ նրա ամեն մի տողից բուրում է ազնիվ, լավատես ձգտումներով լի տրամադրություն: Արազին պետք է մշակի և զարգացնի իր համակրելի տաղանդը: Նա ապագա ունի»:

Սխալված չենք լինի, եթե ասենք, որ Արազին այս գրախոսության մեջ է առաջին անգամ կարդացել իր գրական տաղանդի կանխագուշակումը:

Նույնպիսի բարձր գնահատականների են արժանացել առաջին հայ պրոլետարական դրամատուրգ Ան. Վարդանյանը, «Հ. Հակոբյանի ժանրի բանաստեղծ» Հ. Կամարին և մյուսները:

Հայ պրոլետարական գրականության հարցերին «Պայքարի» էջերում Ստ. Շահումյանի շուրջը համախմբված բուլղերին անդրադարձել են մի քանի անգամ: Ինքը՝ Ստ. Շահումյանը, խոսելով Մ. Գորկու խմբագրությամբ հրատարակված «Сборник армянской литературы» գրքի մասին («Պայքար», 1916 թ., № 33), ի միջի այլոց, մեղադրում է ժողովածուն կազմողներին այն բանի համար, որ նրանք Հ. Հակոբյանի բանաստեղծությունը դուրս են թողել գրքից: Ստ. Շահումյանը շեշտում է, որ Հակոբյանը մի ամբողջ հասարակական խավի՝ հայ բանվորության ցավերի և ուրախությունների արտահայտիչն է, և քանի որ հայ բանվորությունն անուրանալի դեր ունի հայ հասարակական կյանքի զարգացման պրոցեսում՝ որպես ուսուցիչ ու պրոգրեսիվ ուժ, ապա խոշոր նշանակություն ունի նաև այդ բանվորության իղձերի և ապրումների երգչի պոեզիան:

Թերթի հաջորդ համարում (1916 թ., № 34) տպագրված է Ա. Կարինյանի «Ռուսահայ կյանքից և գրականությունից» ընդարձակ հոդվածի 7-րդ բաժինը, ուր հոդվածագիրը քննում է Հ. Հակոբյանի ստեղծագործությունը՝ զուգահեռներ անցկացնելով նրա և Շ. Կուրդինյանի ստեղծագործության միջև: Հակառակ սպեցիֆիկների, որոնք դեռևս 1909—1910 թվականներին, Հ. Հակոբյանի ստեղծագործության հասարակական արժեքը նսեմացնելու միտումով, պրոլետարական բանաստեղծի պոեզիան հակադրում էին Շ. Կուրդինյանի պոեզիային և ստորադասում նրան, Ա. Կարինյանը ցույց է տալիս երկու պոետների իսկական տեղը հայ գրականության մեջ: Հ. Հակոբյանի մասին Կարինյանը գրում է.

«Որքան էլ անհարթություններ ունենա Հ. Հակոբյանը, որքան էլ թերի լինեն նրա մի քանի տողերը, մի երկու կտորները, այնուամենայնիվ անաչառությունը պահանջում է արձանագրել, որ ռուսահայ հեղինակների մեջ հայ արթնացող «չորրորդ դասի» (այսինքն՝ պրոլետարիատի — խ. Գ.) առաջին երգիչը Հ. Հակոբյանն է»:

Դժվար չէ նկատել, որ Ա. Կարինյանի այս տողերը նույն միտքն են հաստատում, ինչ որ Ստ. Շահումյանի գրախոսությունը, որ տպագրվել էր թերթի նախորդ համարում:

Հոդվածում Հ. Հակոբյանի պոեզիան արժեքավորվում է որպես պրոլետարիատի ապագայի նկատմամբ ունեցած օպտիմիստական տրամադրությունների արտահայտություն: Հոդվածագիրը նշում է, որ Հակոբյանը չի աղարտում իրականության էական գծերը, չի վարագուրում բուրժուական քաղաքի ստվերոտ կողմերը, բայց և միաժամանակ տեսնում է բանվոր դասակարգի պայ-

քարը, ապրում է դրանով, արտացոլում այն և ոչ մի վայրկյան չի կասկածում այդ պայքարի հաղթական վախճանի նկատմամբ: Բրապես հենց այս հանգամանքն էլ առանձնակի նշանակություն է տալիս Հ. Հակոբյանի նախառևույցի տոն շրջանի պոեզիային:

1916 թ. ողու պոետ Վ. Բրյուսովի խմբագրությամբ Մոսկվայում լույս է տեսնում «Поэзия Армении» ժողովածուն, որը տարբեր կերպ է ընդունվում հայ հասարակական մտքի տարբեր հոսանքների կողմից: Ժողովածուի մասին իրենց կարծիքն են հայտնել նաև բուլղարիկները: «Պայքարի» 1917 թ. 5-րդ համարում տպագրվել է Ա. Կարինյանի գրախոսությունը: Գրախոսության մեջ բարձր է գնահատվում Վ. Բրյուսովի նախաձեռնությունը, սակայն, ինչպես Ստ. Շահումյանը մեղադրում էր «Сборник армянской литературы» գրքի կազմողներին՝ ժողովածուի մեջ հայ բանվորության երգչին տեղ չտալու համար և ամսասանք էր հայտնում, որ «Միջազգայնության մաքուր զգացմունքների և ձգտումների դրոշակակիր Մաքսիմ Գորկին» լավ օգնականներ չի ունեցել, այնպես էլ Ա. Կարինյանն իր դժգոհությունն է հայտնում «Поэзия Армении» ժողովածուի կազմողներին, «մի ամբողջ կենսական ու ժողովրդական ուղղության» պոետին ժողովածուից դուրս թողնելու համար:

Նույն ոգով գրված մի գրախոսության մեջ («Պայքար», 1916 թ., № 10) Ասք. Մոսվյանը խոսում է Ան. Վարդանյանի «Տգիտության զոհեր» դրամայի մասին: Պաշտպանելով այն ճիշտ միտքը, որ թատրոնը խոշոր նշանակություն ունի մասսաների կուլտուրական-քաղաքական դաստիարակության խնդրում, Մոսվյանն առաջ է քաշում ժողովրդական թատրոնի ռեպերտուարը պրոլետարական, բանվորական պիեսներով հարստացնելու անհրաժեշտությունը: Օրինակ բերելով Վարդանյանի դրաման, հողվածագիրն այն կարծիքն է հայտնում, որ նման թատերական երկերն են օժանդակում մասսաների դաստիարակությանը և ոչ թե այնքան առատորեն տարածված սենտիմենտալ մելոդրամաները, կամ դեկադենտական անիմաստ, էրոտիկ կոմեդիաները, որոնց հիմնական նպատակը հենց մասսաների ուշադրությունը ժամանակակից պայքարի հրատապ հարցերից շեղելն է:

Ասացինք, որ Հ. Հակոբյանի սկզբնավորած հայ պրոլետարական գրականությունը հայ բուլղարիկների կողմից դիտվում էր որպես գորկիական ուղղության գրականություն: Գնահատելով այդ գրականությունը, նրանք ելնում էին այն գնահատականներից, որ տալիս էին Վ. Ի. Լենինն ու նրա զինակիցները Գորկու ստեղծագործությանը:

Հայտնի է, որ Վ. Ի. Լենինը բարձր է գնահատել Գորկու ստեղծագործությունը, հոգատարությամբ աճեցրել նրա գեղարվեստական տաղանդը՝ առաջին հերթին նկատի ունենալով այն հսկայական բարերար ազդեցությունը, որ ունեցել է ռևոլյուցիայի մրկահավի ստեղծագործությունը մասսաներին դասակարգային պայքարի ոգով դաստիարակելու գործում:

Մ. Գորկու ստեղծագործությունը միշտ եղել է նաև Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի ուշադրության կենտրոնում: Դեռևս 1911 թ. «Современная жизнь» թերթում Ստ. Շահումյանը հանդես է գալիս Գորկու պաշտպանությամբ¹: Բանակոծիվ մղելով ռուսական «Баку» թերթի դեմ, որ լուտանքներ էր թափում Գորկու հասցեին՝ իբր թե Գորկու հարձակումներից պաշտպանելով

¹ «Современная жизнь», 1911, № 1.

սոցիալիզմը, Շահումյանը բացահայտում է բուրժուական, այսպես կոչված, «առաջադիմական» հոսանքների Գորկու նկատմամբ բռնած ժխտողական վերաբերմունքի պատճառները: Շահումյանն այդ պատճառները գտնում է այն բանի մեջ, որ ռևոլյուցիայի վերելքի պայմաններում դեմոկրատական որոշ տեսակետներ որդեգրած բուրժուական ինտելիգենցիան մեկը մյուսի ետեից հրաժարվում է դրանցից՝ անդառնալիորեն անցնելով ռեակցիոն դասակարգերի բանակը: Մինչդեռ, ինչպես դիպուկ կերպով նկատում է Շահումյանը, «Մաքսիմ Գորկին երբեք չի գտնվել կյանքի արդի տերերի բանակում», երբեք չի եղել «հրճվողների, պարապ շաղակրատների շարքերում»:

Այս գնահատականից հետո հասկանալի է դառնում, թե ինչու Ստ. Շահումյանը հայ իրականության մեջ հանդես է գալիս որպես Մ. Գորկու առաջին թարգմանիչներից մեկը՝ բոլշևիկյան մամուլի էջերում թարգմանաբար ներկայացնելով Գորկու երկերը: Արդեն ասել ենք, որ Գորկու «Ամեն տեղ է» պատմվածքի առաջին մասը Ստ. Շահումյանը զետեղել է «Մեր խոսք» թերթում: 1915 թվականից մինչև 1917 թվականի մայիսը հայ բոլշևիկները «Պայքարի» էջերում զետեղում են Գորկու բազմաթիվ երկեր¹, հայ պրոլետարիատին դրանցով ոգեշնչելու և ռևոլյուցիոն ոգով դաստիարակելու համար:

Մ. Գորկու ստեղծագործության այսօրինակ պրոպագանդայից զատ, հայ բոլշևիկներն առիթր չեն փախցնում «Պայքարում» հանդես գալ Գորկու երկերին նվիրված հոդվածներով:

«Պայքարում» Գորկուն և նրա ստեղծագործությանը Ստ. Շահումյանն անգրադարձել է երկու անգամ: Դրանցից մեկը մենք հիշատակել ենք, մյուսը 1916 թ. «Պայքարի» 37-րդ համարում լույս տեսած գրախոսությունն է՝ «Летопись» ժուռնալի նույն տարվա հուլիսի համարի մասին, ուր գնահատվում է Գորկու «Ծառայության մեջ» ստեղծագործությունը, որպես «ռուսական գեղարվեստական գրականության ամենափայլուն գործերից» մեկը:

1916 թ. «Պայքարի» 10-րդ համարում լույս է տեսնում Ասք. Մռավյանի գրախոսականը Մ. Գորկու «Հեքիաթների» մասին: Գրախոսության մեջ Գորկու հեքիաթների արժեքավորումից առավել հետաքրքրական է այն դիրքը, որ գրավում է բոլշևիկ քննադատը գեղարվեստական ստեղծագործության գնահատման խնդրում: Կովելով «Бакы» թերթի նույն իմաստականների դեմ, Մռավյանը մերկացնում է նրանց ռեակցիոն տեսակետն այն մասին, թե իբր գրականությունն ու արվեստը ապագադասակարգային են: Գորկու երկերի օրինակով Մռավյանը ցույց է տալիս, որ իսկական արվեստը կյանքի հետ կապված, կյանքի հրատապ խնդիրներին արձագանքող արվեստն է, պրոլետարիատի դասակարգային պայքարն արտացոլող արվեստը: Գորկու «Հեքիաթների» ուժն ու հմայքը նա տեսնում է նրանց ռեալիզմի մեջ, այն պայծառ լավատեսության մեջ, որով շնչում են մեծ գրողի երկերը: «Կախարդական ոչինչ չկա «Հեքիաթների» մեջ,— գրում է Մռավյանը,— նրանք կյանքի ստեղծած հեքիաթներն են: Բովանդակությունը Իտալիայի աշխատանքի մարդկանց առօրյան է, նրանց մտքերն ու հույզերը, ուրախություններն ու տրտմությունները: «Հեքիաթները» ողողված են խոր, մարդկային անկեղծ սիրով ու մարգարեական հավատով դեպի մարդկության պայծառ ապագան: Ամբողջ գրքից բուրում է մի զարմանալի ու վարակիչ լավատեսություն, կենսաթրթիռ աշխարհազգացում»:

¹ Թարգմանությունները մեծ մասամբ կառարել են Ասք. Մռավյանը և Սիմակը:

Նույն ոգով է գրված Ա. Կարինյանի գրախոսությունը¹։ Գրախոսության մեջ «Հեթաթեների» խոշոր գեղարվեստական արժեքը բացատրվում է գաղափարական առողջ բովանդակությամբ։ Գորկու ռեալիզմը հակադրելով դեկադենտական սենտիմենտալիզմին և անկումայնությանը, Ա. Կարինյանը գրում է. «Եթե դեկադենտ պոետի համար իրական կյանքը միշտ կոշտ է, կոշտ է նույնիսկ «աղմկալից» հույզերով լեցուն միջոցին, ապա Գորկու համար այդ նույն «կոշտ» կյանքը հմայիչ է և լի յուրօրինակ պոեզիայով»։

Հոգվածագիրը նշում է, որ Գորկին տուրք չի տալիս կյանքի նկարագրության ռոմանտիկական գունազարդման տենդենցին։ Բանաստեղծական գեղատեսիլ Իտալիայի մեջ Գորկին չի տեսնում «միշտ երջանիկ» ռոմանտիկական մի վայր։ Ընդհակառակը, նա իջնում է կյանքի խորքերը, հանճարեղ գեղագետի վրձինով նկարում հակասություններով լի կյանքի պատկերները, իր հերոսներն ընտրելով աշխատանքի մարդկանց շրջանից, նա մեծ վարպետությամբ արտացոլում է նրանց շարքաշ կյանքը, նրանց բնավորությունը, ապրումներն ու հույզերը։

Ինչն էլ պատճառը, որ հայ բուլճարիկները «Պայքարի» էջերում այդքան հաճախ են անդրադառնում պրոլետարական գրականությանը, այլ խոսքով ինչ դիրքերից և ումից են պաշտպանում նրանք պրոլետարական գրականության դատը։

Այս հարցին պատասխան տալու համար պետք է մի հայացք գցել 1915—1917 թվականների հայ մամուլի և հասարակական տարբեր հոսանքների պայքարի վրա։

1915—1917 թվականները նացիոնալիզմի դեմ հայ բուլճարիկների մղած պայքարի ամենաբուռն տարիներից էին։ Այդ տարիներին դաշնակցական «Հորիզոն» թերթը ծայրեծայր լիքն էր կեղտոտ նացիոնալիստական հոգվածներով և կեղծ ազգասիրական ողբերով, որոնց մեջ գազանային ատելություն էր հրահրվում հարևան ազգերի նկատմամբ։ «Հորիզոնին» ձայնակցում էր «Մշակը», ուր համախմբվել էին սպեցիֆիկյան և այլ բուրժուա-նացիոնալիստական հոսանքների թափթփուկները։ Հայ բուրժուազիայի վարձկան այդ «դեղին» մամուլը լայնորեն տարածում և պրոպագանդում էր շովինիզմը ոչ միայն հոգվածներով ու ողբերով, այլև նացիոնալիստական այսպես կոչված գեղարվեստական գրականությամբ, որ այդ տարիներին այնքան առատությամբ երևում էր այդ մամուլի էջերում, կամ առանձին գրքերով։

Միանգամայն հասկանալի է, որ այսպիսի պայմաններում հայ բուլճարիկների առաջնահերթ խնդիրն էր՝ սկզբունքային պայքար ծավալել առհասարակ հայկական նացիոնալիզմի և մասնավորապես դրա արտահայտման դեմ գեղարվեստական գրականության մեջ։ Այդ պայքարի կարևոր մոմենտներից մեկն էլ ահա պրոլետարական, ինտերնացիոնալիստական գրականության ստեղծումն ու զարգացումն էր, որին ձեռք էին զարկել Ստ. Շահումյանն ու նրա զինակիցները դեռևս հայ բուլճարական մամուլի սկզբնավորման առաջին օրերից։

Սակայն բուրժուական իդեոլոգիայի դեմ հայ բուլճարիկների մղած պայքարը

¹ Տես «Պայքար», 1916, № 38։ Գրախոսության ծանոթագրության մեջ կարդում ենք. «Այս առաջաբանի մի մասը ևս թարգմանաբար բերում եմ իմ այն հոդվածից, որ դեռևս գտնվում է 1914-ին, Պետերբուրգում հրատարակվող բանվորական «Пробуд» օրաթերթի մեջ»։

չէր սահմանափակվում պրոլետարական գրականության պրոպագանդայով: Այդ մի բազմափեղկ երևույթ էր, որ ընդգրկում էր հասարակական կյանքի բոլոր բնագավառները: «Պայքարում» բոլշևիկների իդեոլոգիական հարցերին նվիրված բոլոր հոդվածներն առանց բացառության ելնում են պրոլետարական ինտերնացիոնալիզմից և ուղղված են ընդդեմ բուրժուական նացիոնալիզմի: «Պայքարի» յուրաքանչյուր համարը մի-մի կենդանի բողոք է նացիոնալիզմի և նացիոնալիստների դեմ»¹. — գրել է Ստ. Շահումյանը:

Այժմ տեսնենք, թե կոնկրետ մի քանի գրական հարցի կապակցությամբ ինչ տեսակետներ էին զարգացնում բոլշևիկները և ինչպես էին պայքարում բուրժուական նացիոնալիզմի դեմ: Վերցնենք անցյալի գրական ժառանգության գնահատման խնդիրը:

Քիչ կան հայ նշանավոր գրողներ, որոնց ստեղծագործությանն այս կամ այն առիթով անդրադարձած չլինեն բոլշևիկները «Պայքարի» էջերում: 1916—1917 թվականների ընթացքում նրանք ամբողջական հոդվածաշարքեր են տպագրել հայ գրականության զարգացման պատմությունն ուրվագծելու նպատակով: Աբովյանը, Նալբանդյանը, Պատկանյանը, Սունդուկյանը, Բաֆֆին, Շիրվանզադեն, Զոհրապը, Թումանյանը, Տերյանը, Իսահակյանը, Կուրդինյանը և շատ ուրիշներ այս կամ այն առիթով զբաղեցրել են հայ բոլշևիկներին: Նրանք խոսել են վերոհիշյալ գրողների ստեղծագործության այս կամ այն կողմի մասին՝ գնահատումների ժամանակ մշտապես չափանիշ ունենալով գրականության սպեցիֆիկան, ժողովրդայնությունը, պարտիականությունը, ակտիվ ներգործոն ուժը մասսաների դաստիարակության գործում:

Անհաշտ, սկզբունքային պայքար մղելով բուրժուական «ազգային» կուլտուրայի նոր երանգի, այսպես կոչված, ինքնանպատակ ապաքաղաքական կուլտուրայի և արվեստի դեմ, արձանագրելով, որ «կուլտուրան որպես ինքնանպատակ, միայն բթացնում է մարդկային միտքը և միայն այն կուլտուրան է ստեղծագործող դեր կատարում, որն ազատ է ազգային մեշչանական կապանքներից»², բոլշևիկները որոշակիորեն հայտարարում են.

«Մարդկության մեծագույն տաղանդները զուրկ են եղել նացիոնալիզմից, իսկ որչափով նրանք հարկ են տվել նացիոնալիզմին, նրանք կորցրել են ստեղծագործող թափը»³:

Հայ գրողների ստեղծագործությունները գնահատելիս Ստ. Շահումյանի շուրջը համախմբված մարդիկ ելնում են վերոհիշյալ դրույթից:

Այս տեսակետից հետաքրքրական են մի քանի գնահատումներ:

1915 թ. «Պայքարի» 3-րդ համարում Ասք. Մռավյանը մի գրախոսություն է գետեղել Զուբայովի անվան ժողովրդական տանը Հայկական դրամատիկական խմբակցության ուժերով բեմադրված Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի մասին: Ո՞րն է համարում Ասք. Մռավյանը «Պատվի համար» դրամայի արժեքը: Այս հարցին պատասխանելու համար բերենք մի փոքրիկ փաղվածք.

«Այս դրաման, — դրում է նա, — հայ բեմի վրա հաճախ խաղացվող պիեսներից է և շնորհիվ իր ունակ բովանդակությամբ (ընդգծումը մերն է — Խ. Գ.),

¹ Ստ. Շահումյան, Լ'ստիլ երկեր, 1948, էջ 437:

² Արս. Ամիրյան, Ազգային թե դասակարգային քաղաքականություն, ՊՔՐ. 1916, № 24:

³ Նույն տեղում:

գեղարվեստական ու բեմական արժանիքների,— հաջողություն ունի Շիրվան-զադեի տաղանդավոր գրիչը հարազատ ու թանձր գույներով նկարագրում է Բաքվի հայ բուրժուազիայի առաջին սերնդի բարքերը։ Դրամայի հերոս Անդրեաս էլիզբարյանի առևտրա-արդյունաբերական կարյերան մանրավաճառությունից մինչև նավթարդյունաբերողի աստիճանին հասնելը Բաքվի հայ բուրժուաների մեծամասնության կարյերան է։

Էլիզբարյանների կապիտալիստ դառնալու պրոցեսն էլ նկարագրված է իր իսկությամբ։

«Պայքարի» 1916 թ. 14-րդ համարում տպագրված գրախոսության մեջ նույն Ասք. Մուսվաթյանը, խոսելով Սունդուկյանի «Պեպոյի» մասին, նրա համալսարանում է երկու հիմնական մոմենտով՝ ռեալիստական ճշմարտացիությամբ և կենտրոնական հերոսի քաղաքական ակտիվությամբ։ Այն հարցին, թե որտե՞ղ պետք է փնտրել «Պեպոյի» մշտական հաջողության գաղտնիքը, գրախոսը պատասխանում է. «Երկու մոմենտում, որ «Պեպոյի» հիմնական արժանիքն է կազմում։

Առաջին մոմենտը, դա «Պեպոյի» գերազանց իրական բնույթն է»։

Եվ ապա ավելացնում է. «Անբռնազբոսիկ ռեալիզմի հետ «Պեպոն» ունի մի ուրիշ արժանիք ևս. «Պեպոն» շաղախված է վարակիչ ակտիվությամբ ու խիզախ է»։

Ուշագրավ եզրահանգումների է հասցնում այս երկու խոշոր ռեալիստների երկերին տրված միանգամայն ճիշտ գնահատականների համադրումը այլ թատյունական գրախոսություններում նացիոնալիզմով վարակված պիեսներին տրված գնահատականների հետ։

Խոսելով Շանթի «Կայսր» դրամայի մասին, «Պայքարի» 1916 թ. 15-րդ համարում Ասք. Մուսվաթյանը գրում է.

«Կայսր» դրաման, նրա հավակնոտ բեմադրությունը և հասարակական շափազանց սառը ընդունելությունը, կարծում եմ փառավորապես ապացուցեցին, որ մեր գեղարվեստագետները՝ Շանթը, հայ դրամատիկ ընկերությունն ու իր խումբը զուրկ են ժողովրդի իսկական գեղարվեստական պահանջների ըմբռնումից և այդ պահանջները բավարարելու կարողությունից»։

Այլ թատրոնական ռեցենզիաներից մենք գիտենք, թե այդ ո՞ր պահանջների մասին է խոսքը. «Ժողովրդի աչքում թատրոնը ուրախ ժամանցի վայր չէ, այլ սրբազան մի հաստատություն, որտեղ նա լսում է (պիտի լսի) նոր դեզեցիկ խոսքեր, որտեղ դեմոսի գաղափարական բարձրացման անգիտակ ձրգտումները պատասխան և արձագանք պիտի գտնեն»¹,— հայտարարում է Ասք. Մուսվաթյանը, խիստ քննադատության ենթարկելով թատրոնին մի կողմից՝ անկումային, ապուլիտիկ պիեսների և մյուս կողմից՝ շովինիստական պիեսների բեմադրության համար։

Հայ գրականության գնահատման հարցերում 1915—1917 թվականներին բուրժուական նացիոնալիզմն առանձնակի ուժով հանդես է եկել ոուս բանաստեղծ Վ. Բրյուսովի դասախոսության կապակցությամբ, որ նա կարդացել է 1916 թ. հունվարին, Թիֆլիսում։ Բրյուսովի դասախոսությունը, որ կրել է «Հայկական պոեզիայի մասին» վերնագիրը, հսկայական հետաքրքրություն է առա-

¹ «Պայքար», 1916, № 6, «Հայկական ռեպերտուարը ժողովրդական տանը»։

ջացրել հայ մտավորականության մեջ, սակայն այդ մտավորականության տարբեր թևերը տարբեր ձևով են արձագանքել Բրյուսովի դասախոսությանը: Բրյուսովի դասախոսությունը չի բավարարել Ստ. Ծահումյանի շուրջը համախմբված բոլշևիկներին, մինչդեռ այն անվերապահորեն դուր է եկել բուրժուական ինտելիգենցիային և առիթ տվել զովաբանական ճառերի, որ շուայուրեն նվիրել են նրանք Վ. Բրյուսովին «Հորիզոն» և «Մշակ» թերթերում:

Ի՞նչ ելակետ է ունեցել Վ. Բրյուսովը հայ գրականությունը դնահատելիս, ի՞նչն է, որ այնքան հմայել է նացիոնալիստներն տրամադրված հայ բուրժուական ինտելիգենցիային:

Բրյուսովը հայ պոեզիան դիտել է որպես սինթեզ արևելյան և արևմտյան կուլտուրաների: Նրա կարծիքով հայ ժողովուրդն իր արտակարգ ընդունակություններով կոչված է կուլտուրական վերածննդի օրինակ տալ հարևան ժողովուրդներին: Բրյուսովը քիչ է կանգ առել ժամանակի պոեզիայի բովանդակության վրա, քննել է առավելապես բանաստեղծական ձևի հարցերը: Բրյուսովը միանգամայն անտեսել է հայ ուսուցիչի պոեզիան, որ չ. Հակոբյանի ստեղծագործության մեջ արդեն հանդես էր գալիս ապագա ունեցող, ինքնուրույն ուղղության պոեզիայի իրավունքով:

Հայ բոլշևիկները չեն թերադնահատել Բրյուսովի պոեզիան, առավել ևս նրանք չեն ժխտել այն կարևոր աշխատանքը, որ կատարել է նա հայ գրականությունը թարգմանաբար ուսուցողական մատուցելու ուղղությամբ: Սակայն, ելնելով ժամանակի քաղաքական իրադրությունից, հայ հասարակական մտքի արեւնայում նացիոնալիզմի մոլեղնումից, բոլշևիկներն իրավացիորեն գտել են, որ Բրյուսովի դասախոսությունը որոշ վնասակար ազդեցություն է թողել հայ մտավորականության զգալի մասի վրա: «Պայքարի» 1916 թ. 4-րդ համարում տպագրված «Էլ հերիք է» հոդվածում կարդում ենք. «Նորմալ պայմաններում այս դասախոսությունները (խոսքը Բրյուսովի դասախոսության մասին է և Բալմոնտի համանման դասախոսության, որ նա կարդացել է քիչ ավելի վաղ վրաց պոեզիայի մասին, Թիֆլիսում — Ն. Կ.), կարող էին ունենալ զրական նշանակություն, սակայն ներկայումս նրանք առիթ դրոճան շովինիստական պոռթկումների»:

Հայ պոեզիայի մասին Բրյուսովի դասախոսությունն առանձնակի երևվույթ չէր:

1916 թ. վերջերին և 1917 թ. սկզբներին «Բարձր Գրասիրաց ընկերության» հրավերով այդպիսի դասախոսություններ է կարդացել պրոֆ. Ն. Մառու Մառին հրավիրող ընկերության նպատակների և դասախոսությունների բնույթի մասին մեզ սպառիչ տեղեկություններ է տալիս Արս. Ամիրջանը՝ «Պայքարի» 1917 թ. 2-րդ համարում գետեղված «Մառի դասախոսությունների և Շանթի դրամաների առիթով» հոդվածում: Արս. Ամիրջանը նախ քացահայտում է այն պատճառները, որոնք զրդում են բուրժուական ինտելիգենցիայի ներկայացուցիչներին՝ օտարազգի գիտնականների և զրողների դոներն ընկած նրանց հեղինակությունը մուրալ՝ իրը թն հայ կուլտուրան և զրականությունն ուրիշ ժողովուրդներին ներկայացնելու նպատակով: Հոդվածագիրը բողոքում է այդ հանգամանքի դեմ, քանի որ այն մի կողմից տեղիք է տալիս հայ զրականության մասին սխալ կարծիքների, որովհետև հայ կուլտուրային և զրականությանը միայն թերթակիորեն ծանոթ օտարազգի գիտնականներն ու զրողներն

իրենց հայ լիբերալ կոնսուլտանտների հետ օտար ընթերցողին են ներկայացնում հայ կուլտուրայի և գրականության միայն մեկ՝ «ազգայնական» թևը, մյուս կողմից նրանց գնահատումներն ու շտապ կերպով հանված գովաքանական եզրակացությունները նացիոնալիստական սնամիասություն են հրահրում գեղեսցածր գիտական ու կուլտուրական մակարդակի վրա կանգնած խավերի մեջ:

Մեզ հետաքրքրող հարցի տեսակետից, սակայն, ավելի ուշագրավ է հոգվածի երկրորդ մասը, ուր Ամիրյանը խոսում է դրամատուրգիայի հարցերի մասին: Այստեղ նա մերկացնում է հայ նացիոնալիստներին, ցույց տալով նրանց «ազգասիրական» հետադարձ էքսկուրսների իսկական նպատակը՝ «Հայկական նացիոնալիզմը, — գրում է նա, — հենց օրն ի բուն նրանով է գրադված, թե ինչպես անե, որ այդ մասսաներին հեռու պահե իրականությունից, այդ իրականությունից ավելի լավ տիրապետելու համար»:

Խոսելով Շանթի «Կայսր» դրամայի քննարկմանը նվիրված երկույի մասին, Ամիրյանը բուլղերկյան սկզբունքայնությամբ ջարդուվողուր է անում դաշնակցության լիգերներին այն տեսակետը, թե իբր ժամանակակից հայ կյանքը չի կարող դրամայի նյութ տալ, քանի որ Հայաստանը ինքնուրույն պետականություն չունի, ինքնուրույն ազգային կյանք չունի, ուրեմն և չի կարող ունենալ ինքնուրույն «ամբողջացած դեմքեր»: Ինքնուրույն Սունդուկյանի պիեսների օրինակը, Ամիրյանն ապացուցում է այդ կարծիքի սնանկությունը: Միաժամանակ նա ցույց է տալիս այն խոր տրագիկումը, որ կա հայ ժողովրդի կյանքում: Ուժեղ սարկազմով խաբանելով հայ ազգայնականների քաղաքականությունը, որի հետևանքով «սահմանեն անդին» այլևս ոչինչ չի մնացել, Ամիրյանը շեշտում է, որ ժամանակակից կյանքի դրամատիկական կողմն անտեսելու և միայն անցյալում լիարյուն կերպարներ որոնելու տենդենցը լուր մի նպատակ ունի. «փակել մարդկանց աչքը սահմանեն անդին իրականության վրա»:

Արդեն ասացինք, որ ապուլիտիզմը, անկումայնությունը, դեկադանսը, անհատի կուլտի անվան տակ սեռական սանձարձակության քարոզը բուրժուական իդեոլոգիայի արտահայտման ձևերն էին, որ առանձնակի ուժով պրոպագանդվում էին բուրժուական գրականագետներին և գրողների կողմից ողորդական առաջին ռեուլյուցիայի պարտությունից հետո՝ ցարական ռեակցիայի մոլեգման տարիներին: Ռեուլյուցիայի բարձրացման էտապում ցարիզմն ու բուրժուազիան չէին հրաժարվել հին փորձված գեներից, րեդակառակը, այդ գեներն օգտագործվում էր այժմ մասսաների ուղադրությունը ռեուլյուցիոն տրամադրություններին: Հենց այդ պատճառով էլ Ռուսաստանի բուլղերկյաներն անհաշտ պայքար էին մղում բուրժուական այսպես կոչված «մաքուր», ապաքաղաքական արվեստի դեմ, մերկացնում էին «արվեստը արվեստի համար» բուրժուական լոզունգը, բացահայտում նրա կոնտրռեուլյուցիոն էությունը, խաբազանում նիցչեական գերմարդու կուլտը, անկումայնությունը, պոռնոգրաֆիան: Ստ. Շահումյանի ցուցումով, նրա խմբագրությամբ «Պայքարի» էջերում մեկը մյուսի ետևից բազմաթիվ հոգվածներ են տպագրվում, որոնցում հայ բուլղերկյաները լենինյան տեսակետներ են զարգացնում վերոհիշյալ հարցերի մասին:

Ամենուրեք, ուր արժեքավորվում է զարգացող պրոլետարական գրականությունը, ուր խոսվում է քննադատական ռեալիզմի գրականության լավագույն Տեղեկագիր 3—4

տրադիցիաների մասին, հայ բոլշևիկները պրոլետարական դրականության և քննադատական ոեալիզմի դրականության մեկնաբանմամբ ու պրոպագանդայով ժխտում են բուրժուական ապոլիտիկ, անկումային, նեխվող գրականությունը:

Այսպես, օրինակ, «Պայքարի» 1916 թ. 8-րդ համարում տպագրված թատրոնական ռեցենզիայում, խոսելով Հայկական Դրամատիկական խմբակցության ներկայացումների մասին, Ասք. Մուվյանը դատապարտում է թատրոնին Շիրմանսկու «Արյուն» դեկադենտական պիեսի բեմադրման համար:

«Ո՛ւմ և ի՞նչ ասաց Շիրմանսկու «Արյուն» դրաման, որ ռեկլամով և աղմուկով բեմադրվեց Ամո Խարազյանի բենեֆիսին,— գրում է Մուվյանը:— Դրամայի մեջ կար փող, գինի, լրտեսներ, պոռնիկ կանայք, կնոջ սպանություն, շան սպանություն, ինքնասպանություն... մի խոսքով կինոմոտոգրաֆային «զարհուրելի» պիեսների բոլոր սարքերից, բայց չկար այն, ինչ անհրաժեշտ է ժողովրդական թատրոնի համար՝ առողջ, անբռնազրոսիկ ոեալիզմ, անկեղծ ու գրավիչ մարդկային տրամադրություն... Այդ տեսակի քրեական կոշմարային գրվածքներից թմրած ու մեռնող դասակարգերի այլասերման, քայքայման հոտ է փչում, թող մեռելները թաղեն իրենց մեռելների նեխված դիակները, բայց կայտառ ու կենսուրախ ժողովրդին հետու պահեք այդ տեսարանից, որովհետև նրա մեջ գեղեցկություն չկա, կյանքի առողջ շունչ չկա...»:

Այս է եղել հայ բոլշևիկների տեսակետը դեկադենտական, անկումային դրականության մասին, տեսակետ, որ արտահայտված է բազմաթիվ հոդվածներում և որ ուղղակիորեն բխում է դրականության ժողովրդայնության լենինյան սկզբունքից:

* * *

1917 թ. հունիսին Ստ. Շահումյանի գլխավորած բոլշևիկյան խումբը դուրս է գալիս «Պայքարից» և հիմնադրում բոլշևիկյան «Բանվորի կոիվը» թերթը: «Բանվորի կոիվը» լույս է տեսնում 1917 թ. հունիսի 29-ից և հարատևում մինչև 1918 թ. գարուն: Նույն ժամանակ (1917 թ. մայիսի 1-ից մինչև օգոստոսի 16-ը) Բաքվում Ստ. Շահումյանի խմբագրությամբ լույս է տեսնում «Սոցիալ-դեմոկրատ» բոլշևիկյան թերթը:

«Սոցիալ-դեմոկրատ» և «Բանվորի կոիվը» թերթերի հրատարակման ժամանակաշրջանը երկրում դասակարգային պայքարի սրման ամենակրիտիկական մոմենտներից մեկն էր՝ Ռուսաստանում Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի նախօրյակը, ապա բուն ռևոլյուցիոն օրերը: Երկու թերթերն էլ խոշոր դեր են կատարել բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից սոցիալիստական ռևոլյուցիային անցնելու այս էտապում, հատկապես ռևոլյուցիոն շարժման պրակտիկ դեկավարման առումով: Սակայն, բնականաբար, այդ թերթերը ո՛չ ժամանակ և ո՛չ էլ հնարավորություն են ունեցել լայնորեն զբաղվելու գրականության հարցերով: Դրա փոխարեն հատկապես «Սոցիալ-դեմոկրատ» իր էջերը սիրով տրամադրել է պրոլետարական դրականությանը: Թերթում տպագրվել են Հ. Հակոբյանի, Հ. Կամարու բանաստեղծությունները, «Ինտերնացիոնալի» նոր լարդմանությունը (թարգմ. Հ. Կամարի) և այլ նյութեր:

Այս գեղարվեստական նյութերի տպագրությունն էլ յուրօրինակ պայքար էր կոնտրռևույցիոն բուրժուական պարտիաների ու հոսանքների զործունեության դեմ, քանի որ սրանք անմիջականորեն կապվում են ժամանակի քաղաքական իրադրության հետ, ռևույցիոն պայքարի արձագանքներն են:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևույցիայի հաղթանակից հետո Անդրկովկասը դեռևս հեծում էր մենշևիկյան, դաշնակցական, մուսավաթական տիրակալության տակ: Այդ ժամանակ Անդրկովկասի բոլշևիկների մարտական խնդիրն էր մասսաների մեջ պրակտիկ քաղաքական-դաստիարակչական աշխատանքի միջոցով ապստամբություն նախապատրաստել բուրժուա-նացիոնալիստական տիրակալների դեմ, Անդրկովկասը միացնել Սովետական մեծ Ռուսաստանին: 1917—1921 թվականներն Անդրկովկասի բոլշևիկների հերոսական պայքարի տարիներն են ընդդեմ մենշևիկների, դաշնակցների, մուսավաթականների, հանուն սովետական կարգերի հաստատման Անդրկովկասում: Այս հերոսական պայքարում խոշոր դեր է կատարում հայ բոլշևիկյան լեգալ և անլեգալ մամուլը, որին, մինչ Բաքվի փառապանծ կոմիսարների զնդակահարությունը, անմիջականորեն ղեկավարում էր «Թեորիական մարքսիզմի ծանր հրետանին» Ստ. Շահումյանը:

1917—1920 թվականներին, բազմաթիվ թեորիական ու պրակտիկ հարցերի թվում, հայ բոլշևիկյան մամուլը հաճախ է անդրադարձել նաև գրականության հարցերին: Սակայն այս էտապի մամուլը կարող է առանձին ուսումնասիրության նյութ լինել և նրանում գրական հարցերի լուսաբանումն ու դրավածքը դուրս է մեր հոգվածի սահմաններից:

Այսպիսով.

Իր ծագման առաջին իսկ օրից Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի գրված խավորած հայ բոլշևիկյան մամուլը դասակարգային պայքարի պրակտիկ ու թեորիական բազմաթիվ հարցերի հետ, պարբերաբար քննել է գեղարվեստական գրականության հարցերը: Ինչպես մյուս դեպքերում, այս խնդրում ևս հայ բոլշևիկյան մամուլը միշտ կանգնած է եղել լենինյան դիրքերի վրա, հարցերը մեկնաբանել է դասակարգային պարտիական գրականության լենինյան ասպեկտով: Բոլշևիկյան մամուլի հետ է կապվում հայ մարքսիստական գրականության ծագումն ու զարգացումը մինչ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևույցիան:

Բոցաշունչ ռևույցիոններն Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը և նրանց մարտական զինակիցներն առաջինն են եղել հայ իրականության մեջ, որ սրտի ամբողջ ուժով պաշտպանել են իսկական դեմոկրատական պարտիական գրականության՝ Մ. Գորկու և Հ. Հակոբյանի հիմնադրած գրականության դատը:

Ելնելով գրականության ժողովրդայնության և պարտիականության մարքսիստական սկզբունքից, հայ բոլշևիկներն անհաշտ պայքար են մղել նացիոնալիզմի և գրականության ու գրականագիտության մեջ դրա արտահայտման յուրաքանչյուր փաստի դեմ: Համարձակ կարելի է ասել, որ հայ բոլշևիկյան մամուլի պատմությունը նացիոնալիզմի դեմ մղած պայքարի պատմություն է:

Նույն անհաշտությամբ հայ բոլշևիկյան մամուլը խարանել է գեկադանսի, անկումայնության, ապոլիտիզմի գրականությունը, բացահայտել է, այսպես կոչված, «արվեստը արվեստի համար» ռեակցիոն դրույթի էությունը և դրան հակադրել «արվեստը կյանքի համար» սկզբունքը:

Անցյալի կլասիկ գրականության գնահատման հարցում հայ բուլշևիկյան մամուլն առաջնորդվել է գրականության մեջ իրականության արտացոլման լենինյան տեսությամբ։ Մեկնաբանելով գրողի աշխարհայացքը, նրա քարոզած փիլիսոփայությունն ու քաղաքական դավանանքը, հայ բուլշևիկները երբեք չեն առաջնորդվել գոեհիկ սոցիոլոգիական պիտակներով, ընդհակառակը, գրողի ստեղծագործության գնահատականը նրանք տվել են, նկատի ունենալով քննադատական ռեալիզմի արտահայտման ռեժը նրա ստեղծագործության մեջ։